

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

329.15(474)  
F-90

ՄՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒ, ՄԻԱՅԵ՞Ք


Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

ՅԱՄ. Կ.Կ. (Բ) Կ.Կ. ՅԵՎ Կ.Կ.Յ.

# ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1927 թ. ՈԳՈԽԾՈԽ 11-ին կենսեաբետի  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՌԵՑԵՎ ՓՈՂՈՎՈՒՄ  
ԿԱՐԴԱՅՎԱԾ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1927



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՇ

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

3 Հ 7 2  
Դ 9 3

ՀԱՄ. Կ.Կ. (Բ) Կ.Կ. ՅԵՎ Կ.Կ.Յ.

# ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ 7 2

1927 թ. ՈԿտոբերի 11-ին Լենինգրադի  
ԿԸՀՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՑԻՎԻ ԺՈՂՈՎՈՒՄ  
Կըրտօնքված Զեկուլիզացիա

19156



Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ ԲԱԺԻ ՀԱՅԱՀԱՆՐԱՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1927

ՀԱՅՈՂԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ԹԱՏՎԵՐ 4742

ԳՐԱԴ. 353 Բ.

ՏԻՐԱԺ 2000

## ՆՈՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՎ ՈՊՈՉԻՑԻԱՅԻ ՆՈՐ ՅԵԼՈՒՅԹԸ

Ընկերներ, յես սլետք են նախ ասեմ, վոր այսորված  
իմ զեկուցումը զուտ հաշվետու բնույթ չպիտի կրի,  
վորովհետեւ յես ավելի նպատակահարմար եմ համա-  
րում առանձնացնել, առաջ քաշել այն բոլոր հիմնական  
ու եյական խնդիրները, վորոնք արծարծվել են դեռ  
նոր վերջացած միացյալ պլենումում:

Յես կկենտրոնացնեմ ձեր ուշադրությունը հիմնա-  
կան այն հարցերի վրա, վորոնք վնասակու-  
րյուն ունեն կուսակցության թե՛ դրսի քաղաքականու-  
թյան և թե ներկուսակցական հարաբերությունների  
ուսակետից:

Դեռ վերջերս եր, վոր թե՛ յես և թե՛ մի չարք այլ  
ընկերներ մեր կացությունը բնորոշել եյինք վորպես մի  
կացություն, վոր կապված ե մեր ներքին անումի դըժ-  
վարությունների, —վերականգնման շրջանից վերա-  
կառուցման շրջանն անցնելու դժվարությունների հետ:

Տնտեսական աճման հաստատ ուղին վոր դնելով,  
վերակառուցման շրջանը թեվակոխելով, Խորհրդային  
պետությունը դեմ առավ մի շաբք խոշորագույն պրոբ-  
լեմների, վորոնք բղխում են մեր տնտեսական աճման  
ներքին հակասություններից:

Այժմ մենք կրկին թեվակոխում ենք մեր Միության  
բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցու-

թյան ոլատմության նոր ժամանակաշրջանը, վոր կարելի յե բնորոշել վորպես արտաքին միջազգային դժվարությունների մի շրջան նախ և առաջ:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր ներքին քաղաքականության հարցերը «չինական պարսպով» չեն անջատված միջազգային բնույթ կրող հարցերից: Մենք թեակոխում ենք բարդացած միջազգային հարաբերությունների նոր շրջանը: Շատ նշանակալից չտփով միջազգային հարաբերությունների այդ նոր շրջանը կապված է մեր ներքին աճումի և մեր տնտեսական-քաղաքական կորովի ամրապնդման հետ:

Այն հարձակումները, վոր տեղում են մեզ վրա կապիտալիստական աշխարհից, խոշոր չափով ավելանում են մեր այդ աճման պատճառով: Մյուս կողմից, կապիտալիստական աշխարհի ուժեղացած հարձակումները մեզ վրա, — վոր մենք ընդհանուր առմամբ պատերազմի նախապատրաստում և ԽՍՀՄ ողակավորում ենք անվանում — միջազգային մեծ կարևորություն ունեցող քաղաքական այդ ազգակը, իր հերթին, անմիջականութեն անդրադառնում է մեր ներքին քաղաքականության վրա:

Մակերեսութաբար դիտողի տեսակետով մոտենալով այդ իրողությանը, կարելի յե մատնանշել մեր կոռուպերատիվ և պետական խանութների առջև ձգվող հերթերը, մասամբ հավասարակշռության խախտումը ապրանքների առաջարկության և պահանջի միջև (յես նկատի ունեմ աղի, ալյուրի և այլն ապրանքների հապճեալ գնումները, վորոնց դուք տեղյակ եք առորյակյանքից):

Մյուս կողմից, չնորհիվ այն հանգամանքի, վոր

մեզ վրա հարձակում և պատրաստվում և մեր կողմից  
ևս նախապատրաստություններ են պետք այդ հար-  
ձակումը դիմագրավելու—ավելի խոշոր դժվարու-  
թյուններ են ծառանում մեր առջև :

Դրանք են՝ արտասահմանյան վարկ ստանալու  
դժվարությունները, միջազգային առևտրի ասպարի-  
զում ծագած դժվարությունները և մեր արտահանու-  
թյան ու ներմուծման պլանի համար դրանից բղխող  
դժվարությունները, վորոնք աղղում են մեր տնտե-  
սության արտադրողական ծրագրի և կոնտրու թվերի  
վրա :

Բանն այն է, վոր ինքնապաշտպանության ոպերա-  
ցիաներ նախապատրաստելու դործը պահանջում է,  
վոր մենք վերաբաշխենք մեր նյութական միջոցներն  
ըստ բյուջեյի, ավելացնենք մեր բանակին ու նավա-  
տորմիղին հատկացված գումարները, կուտակենք նյու-  
թական վորոշ միջոցներ (թե՛ նատուրայով և թե՛  
վալյուտայով), հետեասկես և վերաբաշխենք մեր ար-  
տադրական ուժերը տնտեսության զանազան ձյուղերի  
միջև, ամրացնենք մեր ռազմական արդյունագործու-  
թյունը—մի խոսքով՝ սլահանջում են մի շարք այնպի-  
սի ձեռնարկումներ, վորոնք կարողանան ապահովել  
մեր անկախությունը ոտարերկրյա տնտեսական աշ-  
խարհից :

Այդպիսով՝ միջազգային դժվարությունները վո-  
րոշ չափով բղխում են մեր ներքին աճումից, այն  
սպառնալիքից, վոր ներկայացնում են մեր Միության  
աճման փաստը մեր հանրապետության թշնամիների  
համար : Մյուս կողմից, ծագող միջազգային բարդու-  
թյուններն անդրադառնում են մեր ներքին կյանքի

վրա՝ սկսած մեր տնտեսությունից և մինչեւ մեր կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականության համարյա՛ բոլոր առաջարեզները . . .

Յեվ ահա, ընկերնե՛ր, պատմական այս բավականին դժվարանց շրջանում, յերբ համաշխարհային իմպերիալիզմը ուազմական հարձակում է պատրաստում մեր դեմ, մի շրջանում, վոր կապված է հատուկ դրժվարությունների հետ, մենք կրկին տատանումներ ենք տեսնում մեր կուսակցության վորոշ միջնախավի մեջ: Այդ տատանումներն արտահայտվեցին սպողիցիայի մի շարք սուր հարձակումներով, վորոնք ուղղված եյին կուսակցության ղեկավարության, ներկուսակցական արդի մեծամասնության, մեր կուսակցության համապումարների և կոնֆերենցիաների հանած վորոշումների, կուսակցության բոհած պծի դեմ:

Միանգամայն ակնհայտ ճշմարտություն է զառելայն միտքը, թե պատերազմը քաղաքականության շրունակությունն է, կիրառված միայն այլ միջոցներով, ավելի սուր, ավելի վճռական միջոցներով: Ուստի կատարելապես հասկանալի յե, վոր պատերազմի հարցը, պատերազմի վտանգի հարցը, այսինքն՝ մեր քաղաքականությունն ավելի սուր միջոցներով շարունակելու հարցը և նրա հետ կապված ինդիբներն ու դրժվարությունները սուր ձևով առաջարում են նաև մեր ներկուսակցական տարածայնությունների հարցը:

Յեթե ճիշտ է, վոր պատերազմն այլ միջոցներով շարունակվող քաղաքականությունն է, ապա միանգամայն ակների է, վոր մեր քաղաքականության բոլոր խոշոր պրոբլեմներն ել—թե՛ բանվոր դասակարգի ու դյուղացիության փոխհարաբերություննը, թե՛ դյու-

ղացիության տարբեր խավերի վոխճարերությունները, թե՛ մեր վերաբերմունքը դեպի այդ տարբեր իսպերը, թե՛ մեր մոտեցումը միջազգային քաղաքականության հարցերին, այսինքն՝ մի շարք դիվանագիտական խնդիրներին—այս հարցերից ամեն մեկը յերկրի ոլաշտականության նախապատրաստությունների պարմաններում ավելի սուր բնույթ է ստանում, քան առաջ: Հետևապես, կուսակցության և ոպողիցիայի միջնորդ ամեն մի խոչոր տարածայնություն անխուսափելիորեն պետք է առավել խիստ, առավել սուր բնույթ ստանա:

Մենք բազմիցս բնորոշել ենք ոպողիցիոն բլոկի բոնած «գիծը», վորպես մի «գիծ»՝ վոր արդյունք և դժվարություններից բղխող յերկյուղի, վորպես մի «կիծ», վոր սկայմանավորված է համարյա՛ հիստերիկ մի սարսափով, թե մեր կուսակցությունը և բանվոր դասակարգը չեն կարող հաղթահարել այդ դժվարություններին: Յեվ շատ բնական է, վոր մեր կուսակցության ավելի տատանվող խավերը, մանավանդ այն աննշան շերտերը, վորոնք բավականին տեսական ոպողիցիոն ստած ունեն—վոր մեր կուսակցության այդ միջնախավերը խիստ բեկման այս որերին սարսուզացին: Ներկուսակցական կյանքի վերջին անցքերը և այն դիսկուսիան, վոր տեղի ունեցավ ԿԿ-ի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումի ընթացքում, ամբողջովին հաստատեցին այդ միտքը: Ուստի յես հարկադրված եմ իմ զեկուցման մեջ այդ բոլոր պրոբլեմներն առաջադրել՝ առաջնորդվելով ոպողիցիոն հայացքների քննադատության և կուսակցական մեծամասնության, այլ խոս-

քով՝ ամբողջ կուսակցության՝ պաշտպանության տեսակետով։

## ՈՊՈԶԻՑԻԱՆ ՄԵՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԼԱՆՍԻ ՄԱՍԻՆ

Վերջին միացյալ պլենումում արծարծված բոլոր հարցերում ել՝ ոկտած միջազգային կացության և պատերազմի հարցից մինչև տնտեսական քաղաքականության և մեր ներկուսակցական հարաբերությունների պրոբլեմը, կարմիր թելով անցնում է այն պայքարը, վոր մղվում է կուսակցության ու ոպողիցիոներների համեմատաբար փոքրիկ խմբակի միջև, մի խմբակ, վոր չտեսնիած խստությամբ հարձակումներ եր դորձում կուսակցության բռնած գծի վրա։

Դուք հիշում եք, վոր 14-րդ կուսհամագումարից հետո, մեր կուսակցության շարքերում չափազանց տաք քննության առարկա յեր դարձել այն հարցը, թե ի՞նչ ուղղությամբ և ընթանում մեր յերկրի զարգացումը, ինչու և լուծվում լենինյան հարցը՝ «ո՞վ ո՞ւմ կհաղթահարի»։ Դուք հիշում եք նաև, վոր դեռ այն ժամանակ ոպողիցիոն մեր ընկերները լենինյան լուծում չելին տալիս այդ խնդրին։ Դուք հիշում եք այն անվերջ վեճերը, վորոնք վերաբերում ելին մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու պրոբլեմին և դրա հեռանկարներին, վոր չառ մութ դույներով եր պակերացնում ոպողիցիան։

Հենց այդ «ո՞վ, ո՞ւմ» հարցի վերաբերմամբ պլենումում ոպողիցիայից մենք ավելի պարզ մի Փորմուլացինք, վորն եւ ավելի տարբերվում ե հանրակուսակցական տեսակետից, քան առաջ։ Այդ Փորմուլալենումում ձեւակերպեց ընկ. Պյատակովն իր համե-

մատարար լոյալ մի ճառում : Բնկ . Պյատակովը , վեր-  
լուծելով մեր յերկրում գոյություն ունեցող գործա-  
դրսկությունը , այսպիսի մի միտք արձարձեց , թէ՝  
«գործազրկությունն առաջ ե դալիս նախ և առաջ նրա-  
նից , վոր մեր արդյունագործության , տրանսպորտի և  
ֆաղաքային տնտեսության անումբ յետ ե մնում ամ-  
բողջ ժողովրդական տնտեսության անումից» : Այս  
դրույթն այժմ արդեն առաջադրվում ե միանգամայն  
վորոշակի կերպով :

Դժվար չե հասկանալ , թէ ի՞նչ ե նշանակում այդ  
փորմուլը : Յեթե ճիշտ ե , վոր մեր հրամանատարա-  
կան , տնտեսական բարձունքներն իրենց զարգացմամբ  
յետ են մնում յերկրի վողջ եկոնոմիկայի ընդհանուր  
աճումից , այդ նշանակում ե , վոր մեր տնտեսության  
սոցիալիստական հատվածը յետ ե մնում մյուս հատ-  
վածներից , այսինքն՝ կապիտալիստական և հասարակ  
ապրանքային տնտեսությունից :

Յեթե այդ ճիշտ լիներ , ապա անհրաժեշտ կլիներ  
դրանից անխուսափելիորեն յեղրակացնել , վոր վերջին  
ժամանակները լենինյան «ո՞վ , ո՞ւմ» հարցը սոցիա-  
լիստական տնտեսության հատվածի համար բացասա-  
կան լուծումն ե ստանում . դասակարգային լեզվով  
դա նշանակում ե վերջին ժամանակները մեր յերկրի  
ընդհանուր զարգացումը նվազեցնում ե բանվոր դա-  
սակարգի տնտեսական զորությունը , միաժամանակ  
ավելացնելով , բացի պրոլետարիատից , մնացած բոլոր  
դասակարգերի տնտեսական , եկոնոմիկական ուժը :

Իսկ յեթե այդ դրույթն իր հերթին , քաղաքակա-  
նության լեզվով արտահայտենք , բնականարար պետք  
ե յեղրակացնենք , վոր բանվոր դասակարգի տեսակա-

րար կշիռը, նրա քաղաքական զորությունը, սոցիալ-դասակարգային ուժն ընդհանուր առմամբ նվազում է մեր յերկրում, իսկ այդ վերջին հանգամանքը ցնցում է պրոլետարական դիկտատորայի հիմունքները, մեր պետության հիմունքները:

Ինքն ըստինքյան կարծես անմեղ բնույթ կըող այդ թեզն արդեն նախապես մեր տնտեսական զարգացման այնպիսի գնահատականն է տակիս, վորն ոպոզիցիայի լեզվով նշանակում է կուսակցության «վերասերում» «տերմիուր» և այլն:

Յեթե 14-րդ համազումարից առաջ և այդ համազումարին հաջորդող առաջին շրջանում այդ «տերմիուր» խոսքը վորոշ ամոթիածությամբ եր արտասանվում, այժմ՝ արդեն հասանք այն որին, վոր ոպոզիցիան բոլորովին բացահայտ կերպով, այսպես ասած՝ «առանց քաշվելու յե» դնում տերմիուրի հարցը:

Մինչդեռ, յեթե այդ Փրաղը լրջորեն քննելինք, ոլետք եւ վոր վերին աստիճանի նշանակալից յեզրակացության դայինք, մի յեզրակացություն, վորին արդեն հետզհետե մոտենում է ոպոզիցիան, յեթե միայն վերջին դեպքերը չկանգնեցնեն նրան, յեթե նրան չկանգնեցնի մեր կուսակցությունը, վորը ոլետք եւ վերջ դնի ոպոզիցիոն պայքարի ել ավելի զարգացմանը:

Կուսակցության համար, մեր կուսակցական հզոր որդանիզմի համար ամբողջովին, մեր կուսակցության միլիոնից ավելի անդամների, մեր կոմյերիամիության հսկայական ճնշող մեծամասնության համար, և վերջապես, մեզանից ամեն մեկի համար առանձնապես, պարզ ե, վոր մեր յերկիրը բուռն աճումի ժամանակաշրջան է ապրում: Մեզանից ամեն մեկը խորապես հա-

մողված է, վոր վոչ մի յերկրում դեռ յերբեք այլպիսի  
մեծ վերելք չի ունեցել մասսաների ստեղծագործող  
եներդիան։ Յեկ յերբ մեղանից մեկն ու մեկն առիթ է  
ունենում խոսելու ոտարերկրացիների հետ՝ լինի նա  
բուրժուական ժուրնալիստ թե մի բանվոր ընկեր, —  
տեսնում է թե նրանք բոլորն ել ընդունում են, վոր  
մենք, թեպետ չենք հասել տնտեսական-եկոնոմիկական  
բարորության գլխավոր բարձունքները, թեպետ մեր  
յերկիրը դեռ աղքատ է, սակայն այնուամենայնիվ,  
աճում է, աճում է շնորհիվ նրան, վոր հեղափոխու-  
թյունը ցնցեց, շարժեց ժողովրդի հսկայական մաս-  
սաներին, այդ շարժման մեջ ներդրավեց նախ և առաջ  
պրոլետարական խավեր, վորոնք ի վիճակի կլինեն  
ավելի ու ավելի մեծ յեռանդով վերակերտել մեր հին  
կյանքը, նոր ձևերի մեջ դնել նրան։

Դրության այսպիսի գնահատականը, այսպիսի  
ինքնազգացումը մի՛թե տարրական մի բան չե ամեն մի  
կոմունիստի համար։ Մի՛թե մեղանից ամեն մեկի հա-  
մար դա այնպիսի ճշմարտություն չե, վորն ապա-  
ցույցի կարիք չունի՝ մեզ համար զոնե, և մի՛թե մեր  
հեղափոխական վողջ ավյուննվ չելի՛նք քարոզում այդ  
ճշմարտությունը—և պարտավոր ելինք քարոզելում  
ել լինի, ինչ պայմաններումն ել լինի։

Շատ բնական է սակայն, վոր բոլորնին այլ պատ-  
կեր կունենա մեր զարգացումը և մեր յերկրի գրու-  
թյունը, յեթե ընդունենք այն տեսակետը, թե մեր  
սլետական եկոնոմիկան յետ է նահանջում, յեթե ըն-  
դունենք, վոր մեր ամբողջ ուղղության մեջ տերմիգոր-  
յան վերասերում է տեղի ունենում։ Յեկ ահա տեր-  
միգորյան վերասերումի, տնտեսական նահանջի այլ

թեզերից յելնելով, մեր սպողիցիան հանձինս ընկ .  
Տրոցկու, նոր պատերազմի նախապատրաստության  
շեմքում, մի չափազանց հետաքրքրաշարժ տեսակետ է  
տուաջադրում, վորը բնորոշում է նրանց վողջ հայե-  
ցակետը՝ մեր յերկրում կատարվող փաստերի նկատ-  
մամբ։ Պլենումում արծարծելով իմալերիալիստների  
կողմից մեր գեմ նյութվող պատերազմի խնդիրը .  
ընկ . Տրոցկին հարց է տալիս. «Հնարավո՞ր է արդյոք  
հաղթանակ տանել մեր հեղափոխական ճանապար-  
հին»—և պատասխանում է. «Հնարավոր ե»։

Ապա տուաջադրում է յերկրորդ հարցը. «ի՞նչ է  
հարկավոր դրա համար» (հեղափոխական այդ հաղ-  
թանակի համար)։ և պատասխանում է. «դրա համար  
նախ է առաջ, հարկավոր է ցրել քաղաքական աղջա-  
մուղը»։

Հետեապես, մենք վոչ միայն նահանջում ենք ամ-  
բողջ Փրոնտով տնտեսական կյանքի ասպարիզում,  
ինչպես աշխատում եր ապացուցել ընկ . Պյատակովը,  
մեղանում վոչ միայն տերմիգորիանական վերասերում  
և կատարվում, ինչպես պնդում եր ընկ . Տրոցկին Կո-  
մինտերնի Գործկոմում և ընկ . ընկ . Տրոցկին ու Զի-  
նովյեվը կվ. Հ-ի պրիզիդիումում։ Այժմ արդեն համա-  
պարփակ ընդհանրացումներ են կատարվում, վորով  
նրանք մեր շինարարության եպօխայի վորոչ վիլիսո-  
փայությունն են տալիս։ Մեղ համար այս «եպօխայի  
վիլիսոփայությունը» սոցիալիստական տենդային շի-  
նարարության «վիլիսոփայությունն» է. իսկ ընկ .  
Տրոցկու համար դա «քաղաքական աղջամուղ» է, վորը  
«հարկավոր է ցրել»։

Այսպես ահա, մեր սպողիցիոն ընկերները, աստի-

ձան առ աստիճան ցած իջնելով, սկսելով մի քանի թերությունների չափազանցումներից, խորացնելով այն սև պեսսիմիզմը, վորով համակված են նրանք մեր շինարարության և մեր յերկրում կատարվող պրոցեսների նկատմամբ, այժմ մեր յերկրում կատարվող պրոցեսների ընդհանուր բնութագրությունը տվեցին: Յեվ այդ բնութագրության վորոշումն ե՝ «քաղաքական աղջամուղջ»: Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր իրեն հեղափոխական համարող ամեն մի ակտիվ և յեռուն մարդու առջե, վոր ապրում ե՝ «քաղաքական աղջամուղջով» պատած մի յերկրում, ծառանում ե մի զործնական խնդիր, այն ե՝ այդ «աղջամուղջը» ցրել: Ե այն ամենը, ինչ վոր հետագայում պիտի ասեմ Յարուլավի կայարանի հայտնի ցույցի առթիվ և այլայդ բոլորը պիտի վերաբերի այն «ցախավելի» շարժումներին, վորը—ոպոզիցիայի տեսակետով—պետք է ցրի մեր «քաղաքական աղջամուղջը»:

Իմ մեջ բերած այս փոքրիկ ցիտատից դուք տեսնում եք, թե վորքան մեծ տարբերություն կա ոպոզիցիայի հայցքների սիստեմի և կուսակցության տեսակետի միջև, թե վորքան փոխվել ե նրանց աշխարհայացքը: Յեթե կուսակցության ահագին մեծամասնությունը՝ թեերը յետ քշտած, ժրածան աշխատում և տուանց շունչ քաշելու, յեթե կուսակցության լավագույն տարբերն զգում են, թե ինչպես ավելի ու ավելի արագ և հոսում արյունը մեր տնտեսական որգանիզմի յերակներում, յեթե նրանք չոչափելի կերպով զգում են առղ ուժերը, պրոլետարական աճող ստեղծադորձությունը, յեթե աճող ուժի այդ զգացողությունը հիմ-

նական ազդակն է հանդիսանում մեր կուսակցության բանվորական ավանդարդի տրամադրության, մեր ոպողիցիոներ ընկերները չեն զգում այդ, նրանց մեջ տիրապետողը սլարտվողականությունն է, պեսսիմիզմը նրանք չեն հավատում, թե մեր յերկրում հնարավոր է սոցիալիզմ կառուցել, նրանց մեջ պեսսիմիստական այդ աշխարահայացքը դարդացել ձեակերպվել է այնքան ցայտուն կերպով է դրոշմվել, վոր նրանք չեն կարողանում տեսնել մեր յերկրում կատարվող տենդային աշխատանքը. և մեր յերկրի սոցիալիստական շինարարության բալանսը լիդերների հասկացողությամբ «քաղաքական աղջամուղջ» է:

### ՈՊՈԶԻՑԻՈՆ «ԱՂՋԱՄՈՒՂՋ» ՅԵՎ ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միանդամայն բնական է, ընկերներ, վոր մեր յերկրի դրության այդ գնահատականից հատուկ յեղբակացություններ են բղխում պատերազմի նկատմամբ: Յեթե մենք՝ կուսակցության ահազին մեծամասնությունը, պատերազմի աճող վտանգին ի սկառասիան, ձգտում ենք անպայման մորիլիզացիայի յենթարկել մեր բոլոր ուժերը, միջաղդային բանվոր դասակարգի ուժերը՝ մեր յերկիրը պաշտպանելու համար, ապա ոպողիցիայի համար այդ գնահատականից վորոշ հարցականներ են բղխում պատերազմի նախորյակին.. «Իսկ ի՞նչ բնույթ կունենա այդ պատերազմը, ի՞նչ նշանակություն կունենա նա ԽՍՀՄ համար: Տըվյալներ չկա՞ն արդյոք, վոր այդ պատերազմի հետեւանքներն առավել են կվատթարացնեն բանվոր դասակարգի դրությունը մեր յերկրում, և ավելի դեպի աջ

իլւարձնեն մեր կուսակցության քաղաքականությունը» :  
իրոք, յեթե ճիշտ ե, վոր մեր յերկրում բանվոր դա-  
սակարգը յետ ե մղվում իր դիրքերից, յեթե ճիշտ ե,  
վոր մեր յերկրում ավելի ու ավելի յեն աճում տեր-  
միդորիանական տարրերը, վորոնք դնալով ավելի մեծ  
աղբեցություն են գործում մեր կուսակցության քա-  
ղաքականության վրա, վորով և կուսակցությունն ել  
վերասերվում ե, յեթե ճիշտ ե, վոր մեր պետությունը  
վո'չ պրոլետարական քաղաքականություն ե վարում—  
և ինչպես ասում եր ընկ՝ Տրոցկին Կոմինտերնի Գործ-  
կոմում և ընկ՝ ընկ. Տրոցկին ու Զինովյեվը ԿՎՀ-ում,  
պետությունը ավելորդ զիջումներ ե անում կուլակ-  
ներին, յեթե մեր կուսակցությունն ուստրյալովական  
նացիոնալ-ռեֆորմիստական տենդենցներ ունի և մի-  
ջազդային պրոլետարական-հեղափոխական կուրս չի  
բռնել, յեթե այդ ամենը ճիշտ ե, ապա ի՞նչ կլինի պա-  
տերազմ ծաղելու դեպքում : Կատարյալ իրավունք ունի  
յուրաքանչյուր վոք այդ հարցը տալու պատերազմի  
վտանգի պրոբլեմը վերլուծելիս, յեթե նա կանգնած  
ինի ոպոզիցիայի տեսակետի վրա :

Յեթե մեր կուսակցության ղեկավարությունն աղ-  
պային-ռեֆորմիստական ուստրյալովական թեքում ու-  
նի, յեթե մեր կուսակցության մեջ տերմիդորիանական  
փթած ողակներ շատ կան, յեթե այժմ մեր կուսակ-  
ցության կենտկոմը դեպի Ուստրյալովն ե թեքել իւ  
քաղաքականությունը, ապա ի՞նչ դիրք պիտի բռնի  
այդ կեն պատերազմի ժամանակ : Զի՞ ուժեղացնի ար-  
դյոք նա այդ գիծն ել ավելի, ավելի ևս արագորեն չի՛

կատարվի արդյոք մեր պետական իշխանության վերա-  
սերման պլոցեսը պատերազմի ժամանակ :

Յեթե մեր պետության վրա նույն հայացքով գի-  
տենք, ինչպես ոպողիցիան, առաջ չի կարելի բանվոր  
դասակարգին կոչ անել, վոր նա անվերապահորեն  
ուայքար մղի այդ պետության համար : Նա այդպիսի  
պետության պաշտպանությունը—այդ նախատվյալնե-  
րով—հարցական ե դառնում :

Դեռ ավելին, մի քանի այլ յեզրակացություններ  
ևս կարելի յե անել դրանից : Յեթե ընդունենք այն  
տեսակետը, վորի մասին յես խոսում եմ, կատարելա-  
պես պարզ ե, վոր վաղ թե ուշ հետազա յեզրակացու-  
թյունն ես պետք ե անել դրանից : Լենինը վաղուց ե,  
վոր գրել ե պատերազմի յերկրորդ շրջանի մասին :  
Գրել ե, թե կարող են նոր պատերազմներ մղվել իոր-  
հըրդային Հանրապետությունների Միության դեմ :  
Ինչպես հայտնի յե, նա այն թեղն առաջադրեց, վոր  
կապիտալիստական յերկրների հետ մեր ունենալիք  
պատերազմի պրոցեսում, մեր կուսակցությունը,  
մենք՝ կոմունիստներս, յելք պիտի զտնենք վոչ թե  
բուրժուական պետության, այլ միջազգային հեղափո-  
խության մեջ, այսինքն՝ վո՞չ թե ինքներս պիտի իջ-  
նենք չափավոր-ակուրատ բուրժուական դեմոկրատիկ  
պետության աստիճանը, այլ կապիտալիստական պե-  
տությունների ինտերվենցիայի դեմ մեր պերության  
պետության մղած պատերազմը պետք ե վերա-  
ծենք միջազգային սոցիալիստական հեղափոխության  
պրոցեսի : Հարցի այդ տեսակ ձեւակերպումը միանգա-

A 19156

մայն ուղիղ է : Միայն այդ ֆորմուլն է կոմունիստ-  
իան և ով ժխտի այդ, նա այլևս կոմունիստ չե :

Բայց նրանք, ովքեր կարծում են, թե մեղանում  
կուտ պրոլետարական դիկտատուրա չկա այլև՝ թե-  
կուզ բյուրոկրատիկ խեղաթյուրումներով, այլ կիսատ-  
տերմիդորիանական մի պետություն, անխուսափելիու-  
րեն պետք է յեղրակացնեն թե՝ պատերազմի ժամանակ-  
այդ պետությունն ավելի ու ավելի կվերասերվի և  
պատերազմական գործողությունների պրոցեսում,  
յելք կվնտրի վո՞չ թե միջազգային հեղափոխության  
մեջ, այլ մի շարք զիջումներ անելով իր ներքին և ար-  
տաքին՝ մանավանդ ներքին թշնամիներին, վերջնա-  
կանապես վոր կդնի դասակարգային մի այլ բաղիսի  
վրա և իր գործը կդրստի՝ սովորական բուրժուական  
պետություն դառնալով :

Այս հեռանկարներով է տարված մեր ոպողիցիան :  
Ոպողիցիայի մեր ընկերներն ամեն տեսակ փաստի պո-  
չեց են բոնում, վորպեսզի դեմք յերեսութապես հաս-  
տատեն այն, ինչ վոր կատարվում է նրանց սրտում,  
այն ինչ վոր բղխում է պեսսիմիզմից սոցիալիզմի կա-  
ռուցման գործին չհավատալուց : Նրանք վոչ մի առիթ  
բաց չեն թողնում, ինչ փաստ ուղեք մեջ են բերում,  
վորպեսզի կարողանան ասել, թե կուսակցության և  
Խորհրդային իշխանության ներկա դեկավարությունը  
հենց այդ ուղղությունն է բոնել . յեթե յերկրի ներ-  
ուում նա կուլակային քաղաքականություն է վարում  
իւամ մոտ ե այդպիսի կուլակային քաղաքականություն  
վարելու, ապա արտաքին հարաբերությունների բնա-  
դավառում նա վարում է ազգային-ուկիորմիստական  
տենդենցներով համակված մի քաղաքականություն,

ԳՐԱԴԱՐԱՆ

1781 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

17 7/11 1922

ԱՊՈՎԱՆ ԽԱՅԱԿԱՅԱՆ ԱՆԴՐԱ

այսինքն՝ նա յելք և փնտրում վոչ թե միջազգային սոցիալիստական հեղափոխության մեջ, այլ բուրժուական պետության և դեպի այդպիսի պետությունը տանող ուղիների մեջ:

Մենք, ըստ ոպողիցիայի, առաջնորդվելով ԽՍՀՄ պաշտպանության շահերով, մոռացության ենք մատնելուանվոր դասակարգին, չհասկանալով, վոր որեցոր ավելի տարվել ենք նացիոնալ-ռեֆորմիստական քաղաքականությամբ: Ինչո՞ւ յենք նստել մենք Անդլոռուսական կոմիտեյում Պերսելի հետ կողք կողքի: Մեզ իշտամբում են, թե մենք, փոխանակ միջազգային լանվոր դասակարգի հետ գործ ունենալու, ձեռք ենք մեկնել Պերսելի «փթած պարանին»: Թե մենք կոմիտերնից դուրս ենք անում «ծայրահեղ ձախերին» (Մասլով, Ռուտ Ֆիշեր և այլն), և միևնույն ժամանակ նստել ենք Պերսելի հետ միասին: Յեվ ահավասիկ ձեզ մի ամբողջական պատկեր. յերկրի ներսում՝ սոցիալիստական տարրերի նահանջումը, կուրս դեպի կուլակները. արտաքին քաղաքականության մեջ՝ մի փոքր «թեքում» դեպի աջ՝ աջակցություն սոցիալ-դեմոկրատական թափթփուքներին, Պերսելներին, Զինաստանի դեներալներին:

Ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր յեթե ճիշտ լիներ այդ ամենը, ապա պետք եր մտածել, թե ինչ յեղանակով արմատական վերափոխության յենթարկելիրերի գոյություն ունեցող դրությունը: Իսկական հեղափոխականի տեսակետից—յեթե ոպողիցիայի ասածները ճիշտ լինեյին—առաջին յեզրակացությունը կլիներ՝ կուսակցության պառակտում. յերկրորդը՝ կառավարության տապալում և այլն: Յեթե մեր ոպո-

ղիցիոն ընկերները դեռ այդ յեղբակացության չեն հանդել, ապա նրանք ընթանում են այդ ուղղությամբ, վորապեսզի այդ տեսակետին մոտենան:

Թյուրիմացությունների տեղի չտալու համար յես պետք է առաջուց ասեմ, վոր ոպոզիցիոն մի շարք լեռներ, և ավելի մեծ չափով այն ընկերները, վորոնք լիդեր չլինելով, լոկ կողմնակից են ոպոզիցիային, մասնավանդ բանվորները, սուբյեկտիվ կերպով, այսինքն՝ անձամբ, չառ հեռու յեն այն յեղբակացություններից, վորոնք անխուսափելիորեն բղխում են իրենց ասածներից:

Պատերազմի պրոբլեմի հետ կապված հարցերն ամենից ավելի սուր ձեվով եր գրել ընկ. Տրոցկին:

Յես ձեզ արդեն ասել եմ, վոր իրերի այն գնահատականից, վոր տվել է ոպոզիցիան, անխուսափելիորեն ոկեպտիցիզմ և ծագում ԽՍՀՄ պաշտպանության հարցում: Ոպոզիցիոն մեր ընկերների տեսակետը յես «սպանական պաշտպանողություն» կանվանեցի: Ոպոզիցիայի տեսակետը յես այսպես եմ հասկանում՝ յեթե Կեն իր արդի կուրսը փոխի, ոպոզիցիայի առաջարկած «կուրսը» բռնի, այն ժամանակ ամեն ինչ չառ լավ ընթացք կստանա, այդպիսի մի պետություն, այդպիսի կե, այդպիսի կուրս, այդպիսի կուսակցություն կարելի՝ յե պաշտպանել: Իսկ յեթե Կեն այդ կուրսը չփոխի, այն ժամանակ թող ամեն մի բանվոր, ամեն մի բարակ, գյուղացի հարց տա իրան, թե հարկավո՞ր ե արդյոք պաշտպանել այդպիսի պետություն:

Սույն թվի հուլիսի 11-ին ընկ, Արջոնոկիձեյին ուղարկած իր մի նամակում ընկ. Տրոցկին գրել եր.

«Ի՞նչ ե պարտվողականությունը։ Դա մի քաղաքականություն ե, վոր աջակցում ե թշնամի դասակարգի ձեռքում զտնված «իր» պետության պարտության։ Պարտվողականությունն այլ կերպ հասկանալը կամ բացատրելը Փալսիֆիկացիա (կեղծիք) կլինի : Յեթե, որինակ մեկը հայտարարի, թե տպեան վոչ խղճամիտ՝ շպարգաւչիկների<sup>\*</sup>) քաղաքական գիծը պետք ե ցախավելով դեն շպրտվի հենց բանվորական պետության շահերի տեսակետից, դրանով նա յերբեք «պարտվողական» չի դառնում։ Բնդհակառակը, արդի կոնկրետ պայմաններում հենց նա՛ յե հեղափոխական պաշտպանողականության հարազատ արտահայտիչը։ իդեալան զիրիլ հաղթանակ չի բերի»։

Այլ խոսքով, ԿԿ-ն անարդարացի կերպով ե քննադատում ոպողիցիային։ Այն քննադատությունը, ոպողիցիայի կարծիքով, վոչ այլ ինչ ե, բայց յեթե իդեական զիրիլ, վորը հաղթանակ չի բերում, և վորը—յերկրի պաշտպանության շահերի տեսակետից—անհրաժեշտ ե ցախավելով դեն շպրտել։

Առաջնակ. Տրոցկին մի որինակ է մեջ բերում, վոր ցույց ե տալիս, թե ի՞նչպես ե լմբոնում նա ԽՍՀՄ-ի «պաշտպանության» նախապարաստումը։ Բնկ. Տրոցկին զրում է։

«Ուրինակներ, այն ել իրատական որինակներ, կարելի յեր զտնել այլ դասակարգերի պատմության մեջ։ Մի որինակ միայն մեջ բերենք։ Իմ պերիալիստական պատերազմի ոկորին Փրանսական բուրժուազիային գրւ-

<sup>\*</sup>) Ուրիշի գրքում քններից փոխառություններ անող։

խավորել եր «անդեկ-անառագաստ մի կառավարություն : Կլեմանսոյի խմբակն ոպողիցիոն դիրք եր ըլունել կառավարության հանդեպ» . . . (այնպես, ինչպես Տրոցկին ներկայումս ոպողիցիոն դիրք է բռնել) . ապա շարունակում ե .

«Զնայած պատերազմին և ուղմական դրաքնության (հասկանում եք, թե ի՞նչ է ակնարկում) , չնայած նույն իսկ նրան , վոր դերմանացիք Պարիզից 80 վերստ հեռավորության վրա եյին կանգնած (Կլեմանսոն ասում եր . «Հենց այդ պատճառով իսկ») , նա կատաղի պայքար եր մղում մանր-բուրժուական թուլամորթության և անվճռականության դեմ՝ իմպերիալիստական վայրազության և դաժանությանն ի պաշտպանություն :

«Կլեմանսոն դրանով չեր դավաճանում իր դաստիարգին , այլ ընդհակառակն , ավելի հավատարձուրար , ավելի հաստատապես ու վճռականորեն և ավելի խելացի կերպով եր պաշտպանում նրան , քան Վիվիանին , Պենլեվին և ընկերները : Անցքերի հետագա ընթացքը հաստատեց այդ հանդամանքը : Կլեմանսոյի խմբակն իշխանության դլուխ անցավ և ավելի հետեւղողական , ավելի ավաղակային իմպերիալիստական քաղաքականությամբ ապահովեց ֆրանսիական բուրժուազիայի հաղթանակը : Կային արդյոք , Փրանսիացի այնպիսի լրագրողներ , վորոնք Կլեմանսոյի խմբակը պարտվողական անվանելին : Հավանական ե՝ կային : Բոլոր դասակարգերի քարավանում ել քարշ են դալիս տիսմարներ և բանսարկուներ : Սակայն նրանք միշտ ել հնարա-

վորություն չունեն հավասարապես նշանակալից  
դեր խաղալու»:

Այս ցիտատը պետք է վերլուծել: Ի՞նչ է նշանա-  
կում այս պատասխանը, վոր տրվում է ԽՍՀՄ պաշտ-  
պանության հարցին: Բնկ. Տրոցկին ասում եր. կարելի  
յէ միթե մեզ մեր դասակարդի դավաճան համարել,  
յեթե մենք չենք ուզում ճանաչել մեր կուսակցության  
որդի կեն: Վո՞չ, չի կարելի: Կարելի՝ յէ միթե պաշտ-  
պանել կիսով չափ տերմիգորիանական, ուստրյալովա-  
կան մի կուրս և կե-ի ղեկավարության տակ դունված  
խորհրդային կառավարությունը: Վո՞չ: Բայց ի՞նչ  
պետք է անել: Յերկրի պաշտպանության շահերի տե-  
սակետից պետք է փոխել ներկա կառավարության,  
այժմվա կե-ի կազմը, և այն ժամանակ կարելի յէ  
պաշտպանել կենտրոնական կուսակցական և խորհրդա-  
յին այն կենտրոնական ապարատը, վորը կստեղծվի  
այդ «կլեմանսիստական հեղաշրջումի» շնորհիվ:

Կամ այլ կերպ խոսենք. նկատի ունենալով այն,  
ինչ վոր յես ասել եմ իմ զեկուցման հենց սկզբին: Յեթև  
ձիշտ ե, վոր մեր կուրսը՝ մեր կուսակցության ահա-  
դին մեծամասնության, արդի կե-ի կուրսը—թեկուզ  
մի տասերորդ մասով տերմիգորիանական է, ապա ինքն-  
րստինքյան հասկանալի յէ, վոր այդպիսի մի կուրս  
պաշտպանելով, մենք վոչ թե պրոլետարական մի պե-  
տություն, այլ վերտուրյալականներին պաշտոնած  
կլինելինք:

Յեվ յեթե պատերազմ լինի, այդ վերասերյալա-  
կաններն առավել ես կվերասերեն խորհրդային մեր  
պետությունը, մեր կուսակցությունը և այլն և այլն:  
Այդ պատճառով, հեղափոխության համար և հեղափո-

խությունը փրկելու համար, ԽՍՀՄ իր արդի ձեվով  
պաշտպանելու համար, հարկավոր են ներկա կուն նախ  
տապալել, ներկա կառավարության կազմը փոխել. այս-  
ինքն՝ կլեմանսիստական տեսակի մի հեղաշրջում կա-  
տարել մեր յերկրում, նույնիսկ այն դեսլքում յեթե  
թշնամին մեր հեղափոխության կենտրոններից 80 կիլո-  
մետր հեռավորության վրա կանգնած լինի: Առաջե-  
ինչպես ե դրված հարցը մեր առջեվ:

Սակայն դա ԽՍՀՄ-ի անպայման պաշտպանության  
տեսակետ հո չե, այլ վորապես՝ թե «բայլշեվիկական»  
կլեմանսիզմի տեսակետ: Ընկ. Տրոցկու ասածը հո այն  
չե, թե կենտրոնական Կոմիտեյում, մեր կուսակցու-  
թյան մեջ նստած են առհասարակ անընդունակ մար-  
դիկ.—վո՛չ: Բանն այն ե, վոր ոպոզիցիան համաձայն  
չե կուի քաղաքական գծին, ուստի և «կլեմանսիստա-  
կան հեղաշրջում» արտահայտության տակ, քաղաքա-  
կան դասակարգային վորոշ փոփոխություն ե հասկաց-  
վում այսաւեղ:

## ՈՊՈԶԻՑԻՈՆ ԻԴԵՈԼՈԳԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Մեղանից յուրաքանչյուրը դյուրին կըմբռնի, վոր  
«կլեմանսիստական» այդ ամբողջ իդեոլոգիայի արմա-  
տը թաղված է մի հիմնական հարցի՝ մեր յերկրի եկո-  
նոմիկայում կատարված իրողությունների գնահատ-  
ման հարցի մեջ, թե ճի՞շտ ե թե վոչ, վոր պետական  
որդյունակործությունը յետ ե նահանջում մասնավոր  
ոնտեսության ձնշումով: Մենք այն կարծիքին ենք,  
վոր դա բացարձակ ոնհեթեթություն ե: Կարելի յեր  
այժմ մի շարք թվեր մեջ բերել, վորոնք ցույց կտային,

թե պետական արդյունագործության տեսակարար կը-  
շիոր բարձրանում ե , թե մենք , և' մեծածախ և' մանրա-  
ծախ առետրի բնագավառում , վերջին տարվա ընթաց-  
քում , բավականաչափ հաջողություններ ենք ունեցել .  
Վոր մենք մասնավորին հուպ տալու գործում այս տարի  
եւ ավելի առաջ ենք զնացել , քան յերբեքիցեւ : Ամենքն  
եւ շատ լավ դիտեն , վոր մեր պետական առեվտրի և  
կոռպերացիայի տեսակարար կշիռը վերջին տարին  
դպալի չափով բարձրացել ե , վոր մի շարք առարկեղ-  
ներում մենք մասնավորին յետ մղեցինք նրա շատ ա-  
մուս դիրքերից , որինակ՝ հացահատիկների մթերման  
գործում : Վերջին տարում , մենք մասնավորի վրա  
ներգործում եյինք կրկնակի մեթոդով թե՛ յերկաթու-  
ղային տարիֆների բարձրացումով և թե՛ աղմինիս-  
տրատիվ կարգադրություններով : Մեզ համար կատա-  
րելապես պարզ ե այդ հարցը :

Մեզ համար վոչ մի տարակույս չկա , վոր մեր պե-  
տության տնտեսական բազան ամրանում ե և զարգա-  
նում , վոր սոցիալիստական զարգացումը հաճախ ավե-  
լի առաջ ե անցնում , քան տնտեսական զարգացումը . և  
չե՞ վոր դրանից ե կախված ամեն ինչ : Յեթե այդ այդ-  
ունես ե , ապա ուրեմն անհեթեթություն ե այն . հայտա-  
րարությունը , թե մեր յերկրում սլրուետարիատը յետ  
է նահանջում . անհեթեթություն ե ոլնուել , թե մենք  
յենթակա յենք տերմիուրիանական վերասերման . ան-  
հեթեթություն են այն բոլոր յեղբակացությունները ,  
վորոնք բղխում են այդ տեսակետներից՝ մինչեւ իսկ  
«կլեմանսիստական» անալոգիայի կառկածելի «խաղը» :

Ինչ ծագում ունեն , սակայն , ոպոզիցիայի այդ  
բոլոր տասանումները , վորոնք տեղիք ովին նրան՝

այլպիսի անլուր հակակուսակցական, կարելի յէ ասել,  
հակահեղափոխական յեղբակացություններ անելու:

Ներկայումս իարելի յէ բացարձակ ճշտությամբ,  
ուստի մազաչափը անդամ ճշմարտությանը դավաճանելու, ասել, վոր այն ամենը, ինչ վոր ասում եյին  
Մյասնիկովն ու «Ռաբոչայա Պրավդա»-ն, այն ամենը,  
ինչ վոր առաջադրում եյին սաղմային վիճակում բան-  
վորական ուղղիցիայի մի քանի խմբավորումները՝  
ժանավանդ մենչեվիզմին մոտեցող, այսպես կոչված,  
ծայրահեղ ձախերը, այդ բոլորը կրկնում ե այժմ միա-  
ցյալ ուղղիցիան ընկ. Տրոցկու գլխավորությամբ:  
Ընկ. Տրոցկու տված գնահատականից չի բղխում մի-  
թե յերրորդ հեղափոխության պրոբլեմը, վորի մասին  
իսոսում եր «Ռաբոչայա Պրավդա»-ն: Անշուշտ: Ինչպես ո  
եյին դատում «Ռաբոչայա Պրավդա» խմբակի անդամ-  
ները, վորոնք անլեռաւ բջիջներ եյին կազմակերպում  
մեր կուսակցության մեջ՝ նպատակ ունենալով կոիվ  
մղել կուսակցության ու Խորհրդային իշխանության  
դեմ: Նրանք ասում եյին. բանվոր դասակարգն իշխա-  
նություն նվաճեց. այդ իշխանությունը հետագայում  
վերասերվեց, վորովհետեւ մեր յերկրում դյուղացիու-  
թյան թիվը մեծ է: Մեր պետական արդյունագործու-  
թյան ասպարիզում առաջ յեկալ նոր բուրժուազիայի  
մի դասակարգ, վոր տիրապետում է հրամանատարա-  
կան բարձունքներին, թե ժամանակ է արդեն կեղծ-  
դիկատուրայից փոխանցնել իսկական դիկատուրա-  
յի, թե անհրաժեշտ է մի հեղափոխություն ևս կատա-  
րել՝ գոյություն ունեցող Խորհրդային իշխանության  
դեմ: Ահավասիկ յերրորդ հեղափոխության պրոբլեմը:  
Այդ տեսակետը քաջալերություն է դանում նաև կա-

ուցկու կողմից, և ինի կողմից, և «Սոցիալիստիչեսկիյ վեստնիկ» կողմից: Վերցնենք հենց մեր վոխերիմ հակառակորդ Կառւցկուն: Նա ոլատրաստ է նույնիսկ հոմաձայնելու, վոր մենք իշխանության գլուխ ենք անցել, վորպես բանվորական կուսակցություն: Իսկ ներկայումս, ասում են նա, Խորհրդային Միությունը բյուրոկրատիզմի աճման շնորհիվ, տերրորիստական ռեժիմի, ձնշումների շնորհիվ, այնպիսի մի պետություն է դարձել, վորը ցարիզմից ել դեռ ավելի վատ է: Ուստի, պետք է նրան տապալել. այսպես եղածում Կառւցկին: Հարկավ, ոպողիցիան այդպիսի յեղրակացություն չի անում ուղղակի (այդ եր պակաս), բայց նա արդեն հետզհետե մոտենում է մենչեվիկական կամ կիումենչեվիկական այդ տեսակետին:

Պետք է ավելել, դեն զցել «տերմիորիանականներին», ասում են ոպողիցիոներները: Բայց ներողություն. չե՞ վոր Մարտովն ել 1921 թվականին՝ նեղ-ի քաղաքականությանն անցնելիս, ասում եր, թե դա Տերմիոր է, թե Լենինը ավելի ու ավելի արագորեն դեպի Բրյումերի 18-ը, դեպի բոնապարտիզմ ե ընթանում:

1921 թվականին, Մարտովը կարծում եր, թե նեղ-ը բայլչեվիկների կողմից տնտեսական կապիտուլիացիա յե բուրժուազիայի հանդեպ, թե այդ կապիտուլիացիային կհետեւի քաղաքական կապիտուլիացիան և մեր կուսակցության առաջնորդ Լենինը բուրժուական մի դիկտատոր կդառնա, մի Բոնապարտ: Այդ որերից՝ 1921 թ. մինչեվ 1927 թիվը, վեց տարի յե անցել արդեն: Մենչեվիկական այդ բարբաջանքների կը կնելը մտքի խորության կամ որիդինալության ապա-

ցույց չե հարկավ, սակայն դա նշանակալից ե քաղաքական տեսակետից, քանի վոր մեր կուսակցության ներսում ևս կը կնվում են դրանք:

Ոպոզիցիայի տրոցկիզմին մոտենալը բացատրվում է նրանով, վորից նրա դատողությունների հիմքը տրոցկիստական թեորիան ե կազմում ու Զինովյեվը, Կամենեվը և ուրիշները տրոցկիստ են դարձել, տրոցկիստական հողի վրա վոտ են դրել:

«Լենինգրադի ոպոզիցիայի» մեր ընկերներից վոժանք՝ Զինովյեվը, Կամենեվը և ուրիշները անհեթեթություն են համարում մեր այն կարծիքը, թե Տրոցկու իդեոլոգիայի մեջ դեռ մնացել են մենչեվիկական վորոշ տարրեր: Նրանք անթույլատրելի յեն համարում «փորփրել» Տրոցկու պատմական անցյալը: Կամենեվը կե-ի և կվ. Հ-ի միացյալ պլենումում արտասանած իր ճառի մեջ ասում եր. «Մի ժամանակ գոյություն ուներ ուստմական տրոցկիզմ. պատմական այդ տրոցկիզմը մարտնչում եր բայլշեվիզմի դեմ, բայց նա արդեն ինքը վերջ դրեց իր գոյության, —այդ իսկ պատճառով մենք այժմ Տրոցկու հետ համերաշխ ենք ընթանում»:

Ճիշտ ե այդ: Այդպես ե դործը: Ճիշտ ե, վոր Տրոցկին իսկական բայլշեվիկ ե դարձել: Հարկավ, մենք այս հարցերն արծարծում ենք վո'չ թե այն նպատակով. Վոր թակարդը դցենք ընկ. Տրոցկուն կամ խայթենք նրան անձնպահու: Այդպիսի բան մեզ մաղաչափ անզամ չի հետաքրքրում: Մեզ հետաքրքրում ե սակայն ե յեռ կարծում եմ, վոր մեր կուսակցության ամեն մի անզամին պետք ե հետաքրքրի հետեւյալը՝ ի՞նչպես բացատրել այն փաստը, վոր տասնյակ տարիներ շարունակ—թե ընկ. Լենինի որոք ե թե մանավանդ նրա մոհից հե-

տո—Տրոցկին անվերջ հարձակումներ ե գործում մեր կուսակցության վրա : Այդ վարքաղիծը մի արմատ չունի՞ արդյոք : Արդարացի՝ յե արդյոք Կամենեվը, թէ Տրոցկին վերջ տվեց իր «պատմական տրոցկիզմին» : Վո՞չ : Տրոցկու մեջ, անտարակույս, դեռ պահպանվել է նախկին Տրոցկին : Նրա առաջվա գծերը այնքան ել առելի չեյին՝ յերբ հեղափոխությունը բուռն փոթորկաւից ձեվեր եր ապրում, անմիջական ապստամբության կամ քաղաքացիական պատերազմի շրջանումն եր . այն ժամանակները տրոցկիստական գծերն աչքի չեյին ընկնում : Բայց այժմ, սոցիալիզմի համառ, սիստեմատիկ շինուարության ժամանակաշրջանում, Տրոցկու այդ հին սխալները, կրկին դուրս են ցցվում : ԿվՀ-ի հունիսի 27 թվակիր արձանագրությունների մեջ ընկեր Տրոցկին հետեւյալ ձեվով ե պատկերացնում իր արդի և անցյալ քաղաքական Փիզիոնոմիան :

«Յես . . . կարեվորագույն շատ հարցերում պայքարում եյի Լենինի և բայլշեվիկյան կուսակցության դեմ, սակայն մենշեվիկ չեյի : Յեթե մենշեվիզմը վորպես քաղաքական դասակարգային մի գիծ համարենք,—և այդպես ել միայն պետք ե հասկանալ—ապա յես մենշեվիկ չեմ յեղել 1904 թվականից սկսած : Յես յերբեք համաձայն չեմ յեղել մենշեվիզմի հետ՝ հեղափոխության մեջ դասակարգերին վիճակված դերի հարցում» :

Այսպես ե դրում, ավելի ճիշտ՝ ասում ե այժմ ընկ . Տրոցկին : Տրոցկին հայտարարեց, թէ 1904 թվականից սկսած, նա «յերբեք մենշեվիկ չի յեղել այն հարցերում, վորոնք վերաբերել են դասակարգերի գնահատության», այլ խոսքերով՝ այն, վոր Տրոցկին պաշտպանում եր «լիկվիդատորներին», վոր նա մենշեիկների

հետ միասին մտել եր ուղոստոսյան բլոկի մեջ, ընկ։ Տրոցկու կարծիքով յերկրորդական նշանակություն ունեցող փաստեր են, վորոնք լոկ կազմակերպչական հարցերին են վերաբերում։ Իսկ դասակարգերի գնահատության հարցում, նա, վորպես թե, մենշևիկների հետ չի յեղել 1904 թվականից սկսած։

Այսպես ե գնահատում ներկա Տրոցկին նախկին պատմական «Տրոցկուն»։ Ճի՞շտ են ընկ։ Տրոցկու այսպեղ ասածները։ Վո՛չ։ Տրոցկին մենշևիկների հետ համակարծիք եր դասակարգերի գնահատության հարցում։ Դրա մասին կատարյալ ճշտությամբ գրել ե ինքը լենինը։

Ահա թե ի՞նչ ե գրել լենինը 1915 թ. նոյեմբերին իր մի հոդվածում, վոր կրում ե «Հեղափոխության յերկու դժի մասին» վերնադիրը։

«Հեղափոխական կուսակցության գլխավոր խնդիրն ե՝ պարզել դասակարգերի փոխհարաբերությունն առաջիկա հեղափոխության մեջ։ Այդ խնդիրից խույս ե տալիս կազմակերպչական կոմիտեն (մենշևիկների. Ն. Բ.), վորը Ռուսաստանում դեռ հավատարիմ դաշնակիցն ե «Նաշե Դելո»-ի (մենշիկական որդան. խմբ.) իսկ արտասահմանով վոչինչ չնշանակող «ձախ» Փրազներ և շպրտում։ Այդ խնդիրը ճիշտ չի լուծում Տրոցկին „Наше слово“ թերթում, կրկնելով 1905 թ. իր «որիգինալ» թեորիան։ Նա չի ուզում խորհել, թե ի՞նչ ե պատճառը, վոր կյանքը տաս տարի շարունակ այդ գեղեցիկ թեորիայի կողքովն ե անցել» . . .

«Տրոցկու որիզինալ թեորիան յուրացնում ե  
բայլշեվիկներից այն լոգունգը, վորով կոչ ե ար-  
վում պրոլետարիատին վճռական, հեղափոխական  
պայքար մղել և քաղաքական իշխանությունը նը-  
դաձել, իսկ մենշևիկներից՝ գյուղացիության դե-  
րք ժխտող տեսակետը . . .»

«Տրոցկին զործնականում աջակցում է Ռու-  
սաստանի լիբերալ բանվորական պոլիտիկոսներին,  
վորոնց համար «Ժխտել» գյուղացիության դերը՝  
նշանակում ե չցանկալ գյուղացիությունը հեղա-  
փոխության կոչել»:

Այսպես ե դնում հարցը ընկ. Լենինը: Նա ասում  
էր իշխանությունը բանվոր դասակարգի կողմից նվաճ-  
վելու խնդրում Տրոցկին բայլշեվիկների հետ եր. գյու-  
ղացիության նկատմամբ վարվելիք քաղաքաքականու-  
թյան հարցում՝ Տրոցկին մենշևիկների հետ եր:

Ի՞նչ նշանակություն ունի գյուղացիության գնա-  
հատումը: Միթե դա կարելորագույն դասակարգերից  
մեկի գնահատումը չե՞ : Անշուշտ այլպես ե: Յես մի  
ցիտատ միայն մեջ բերեցի. սակայն մի՞թե դրանից կա-  
տարելապես ակներեվ կերպով չի հետեւում, վոր Լե-  
նինը այն կարծիքին եր, թե Տրոցկին 1904 թվականից  
հետո յել, յերկար ժամանակ մենշևիկների հետ համա-  
կարծիք եր՝ կարելորագույն դասակարգերից մեկի՝  
գյուղացիության դերի գնահատման հարցում, թե նա  
մենշևիկորեն եր գնահատում այդ դերը:

Այս բոլորն անվիճելի յե :

Այժմ Տրոցկին ասում ե, «յես դասակարգերի  
դերի գնահատման հարցում, յերբեք մենշևիկների  
հետ համամիտ չեմ յեղել»—ի՞նչ ե նշանակում այդ.

այն, վոր ընկ. Տրոցկին մինչև 1927 թվականի հունիսը չի ըմբռնել, թե ի՞նչ խոշոր սխալ է դործել նա, հիմնական, եյական մի հարցում՝ գյուղացիության դերի դնահատման հարցում։ Տրոցկին չի հասկացել, նա այդ հարցում մենչեվիկների հետ համամիտ եր և, քանի վոր նա իր հին սխալները չի խոստովանում՝ վորոչ չափով ներկայումս ել նրանց հետ և։ Ինձ թվում ե ընկերնե՛ր, քանի Զինովյեվը, Կամենեվը և «Լենինգրադի ոպոզիցիայի» մեր մյուս ընկերներն ասում են թե Տրոցկին այժմ բոլորովին այն չե՛ ինչ վոր մենչեվիկների հետ կապ պահպանած ժամանակ, քանի վոր նրանք, հետեւ վաղեաս, համամիտ են Տրոցկու կողմից Կվաչ-ին ներկայացված վերոհիշյալ հայտարարություններին, ապա ուրեմն նրանք ևս իրենց համար աննկատելի կերպով Տրոցկու գիծն են բռնում այդ կարեվորագույն քաղաքական հարցում։ Դրանից ել բղխում են մհացյալ յեզրակացությունները։ Մի՛ թե Տրոցկին, յեւակետ ունենալով գյուղացիության դերի վերոհիշյալ գնահատումը, չեր պնդում, թե բայլշեվիկները, գյուղացիության ու պլուտարիատի մերձեցման կուրս բռնելով, պլուտարիատին «ինքնասահմանափակելու» քաղաքականություն են վարում (ներկա արտահայտությամբ՝ «վոչ զուտ դասակարգային քաղաքականություն»), «հենարան» ունենալով հակահեղափոխական մի գործակից՝ գյուղացուն։ Այսպես են բնորոշում նրանք բանվոր դասակարգի և գյուղացու բլոկի քաղաքականությունը։ Ենկ. Տրոցկին դեռ այն ժամանակները «նախագուշակում եր», թե բայլշեվիկները բանվոր դասակարգի վընքից կկապեն հակահեղափոխական մուժիկին, վերջնիւ իրենց գործակիցը կդարձնեն և այդպիսով՝ բանվոր

դասակարգը պետական իշխանություն նվաճելուց հետո, իրենց հակահեղափոխական հատկությունները դարձացնելով, կորստի կմատնվեն: Այժմ ել դեռ, յերբ ընկ Տրոցկին բավականաչափ չի հասկացել—կամ ավելի ճիշտ բոլորովին չի հասկացել իր այն ժամանակավայր սխալի խորությունը—այդ վորդը կրծում է նրան շարունակ: Ինչպես և հասկանում նա ներկա գրությունը:

ԹԵ՛ նա և թե՛ նրան հարած Զինովյեվը, Կամենյեվը և ուրիշները արդի դրության մասին այնպիսի մի տեսակետ ունեն, վորն զգալի չափով մոտենում և սոցիալ-դեմոկրատների տեսակետին: Այդ այն հայեցակետն է, վորի մասին մենք բազմիցս խոսել ենք 14-րդ համագումարում տեղի ունեցած դիսկուսիայի ժամանակ: Այս հայեցակետի համաձայն, մեր յերկիրը հետամնաց մի յերկիր է, մեղանում ահազին թվով գյուղացիություն կա, բանվոր դասակարգը մի բարակ միջնախավ և կազմում միայն, մենք չենք կարող ինքներու սոցիալիզմ կառուցել, մենք կարող ենք միայն մի առժամանակ դիմանալ, կարող ենք մեկը մյուսի յետեվից զիջումներ անել մեր կիսադաշնակիցներին կամ բացարձակ դասակարգային թշնամիներին: 1921 թվականին—ասում են նրանք—մենք մի խոշոր վոսկը նետեցինք գյուղացիության ու նեպմանների առջեվ, վորով և կարողացանք պահպանել մեր ձեռում իշխանությունը: Հետագայում մենք հարկադրված եյինք իրար յետեվից վոսկը նետել մեր դասակարգային հակառակորդների առջեվ իշխանությունը մեր ձեռից բաց չթողնելու համար: 14-րդ կոնֆերենցիայի շրջանում մի վոսկը ևս նետեցինք. 14-րդ համագումարից հետո՝ մի վոսկը ևս, և այդպիս

անում, վորպեսզի կարողանանք փրկել մեզ՝ վորպես  
քաղաքական մի իշխանություն, վորի հիմքը անդադար  
փորփռում են մեզ թշնամի խավերը և առաջին հերթին  
դյուղացիությունը։ Վորովհետեւ միջազգային-հեղա-  
փոխությունը վրա չի հասնում, մենք խեղդվում,  
կորսոի յենք դիմում վորպես ոլրուետարական մի ողե-  
տություն։

Նախադրելով, վոր մենք մեր հետամնաց յերկրում  
չենք կարող սոցիալիզմ կառուցել, վոր մենք բավակա-  
նաչափ ներքին ուժեր չունենք սոցիալիզմ կառուցելու  
համար—մի նախատվյալ, վոր սոցիալ-դեմոկրատական  
ընույթ ունի—ընկ . Տրոցկին զալիս և այն յեզրակացու-  
թյան, թե մենք կորսոի յենք դիմում, թե մենք վերա-  
սերվում ենք, վերասերվում ե ԿԿ-ի կուսակցական զե-  
կուվարությունը և այլն, թե այդ պատմականորեն ան-  
խուսափելի մի ոլրոցես ե :

Այդ հայեցակետից ել ըդխում ե պատերազմի դեպ-  
րում կիրառվելիք նրա «կլեմանսիստական» որիենտա-  
ցիան։ Յեթե ուստրյալովական թեքում ունեցող բայլ-  
շեվիկյան ԿԿ-ն զեկավարի պետությունը պատերազմի  
ժամանակ, ապա նա՝ այդ ԿԿ-ն ավելի ևս կթեքվի զե-  
տի ուստրյալովականություն, ել ավելի զիջումներ կա-  
նի կուլակին, նեպմանին և յելք կփնտրի վոչ թե մի-  
ջազգային հեղափոխության մեջ, այլ ուստրյալովական  
ազգային ռեֆորմիզմի մեջ։ Հետեվապես, Տրոցկու  
կարծիքով, վճռուկան «ոլրուետարական հեղափոխա-  
կանները» պետք ե նույնքան հանդուզն լինեն պետու-  
թյան զեկավարությունը փոփոխելու գործում, վոր-  
չափ հանդուզն ու համարձակ եր Կլեմանսոն բուրժուա-  
կիայի թուլամորթ խավերի նկատմամբ։ Դա յե, վոր-

ոլես թե, այն միակ ուղին, վորը կարող է փրկել պրո-  
լետարական հեղափոխությանը :

Այդ ամբողջ «պլանը» կառուցված է վո'չ լենինյան  
տեսակետի վրա : Նա սպացուցում է, վոր ընկ . Տրոց-  
կին միանգամայն չի ըմբռնում բանվոր դասակարդի և  
պյուղացիության փոխադարձ մերձեցումը, վոր նա հո-  
մոզված է, թե անկարելի յէ մեր յերկրում սոցիալիզմ  
կառուցել, դրանից ել համոզված կերպով յեզրակաց-  
նում է, թե մենք անողայման վերասերման կենթարկ-  
վենք, յեթե հենց այժմ իսկ պետական ոգնություն չըս-  
տանանք այլ յերկրների հաղթանակ տարած բանվոր  
դասակարդի կողմից :

Զեվակերպման տեսակետից այդ ըմբռնումը շտա-  
ռագիկալ բնույթ ունի՝ ավելի ուժով հույս տվեք կու-  
լակին, դեն չպրտեցեք ամեն տեսակ տերմիգորիանա-  
կան դիրիլը, և այլն : Բայց այլպես թվում է միտյի :  
Այդ իդեոլոգիայի կորիզը փոտած է :

Քաղաքական այդ իդեոլոգիայի կորիզն այն է, թե  
մենք նահանջում ենք, թե հաղթահարված ենք, թե  
մենք վերասերվում ենք, թե բանվոր դասակարդն ընդ-  
հանրապես չի կարող մեր յերկրում հաստատ հող գտնել  
իր վոտի տակ՝ վո'չ քաղաքականալես, վո'չ ել  
տնտեսապես, այլ խոսքով՝ այդ ամբողջ թեորիան  
կառուցված է սոցիալ-դեմոկրատական տեսակետի  
վրա, մի տեսակետ, վորի համաձայն, բան-  
վոր դասակարդը, ըստ եյության, չպետք է զենք ըստը-  
րացներ Հոկտեմբերին, վորովհետեւ մեր հետամնաց  
յերկրում խոսք անդամ չի կարող լինել սոցիալիստա-  
կան հեղափոխության մասին, վորովհետեւ մեր հեղա-  
փոխությունը միտյն բուրժուական կարող եր լինի :

զորովհետեւ բակունինական-լենինյան ուսուպիկ ցնու-  
րամտություն և Ռուսաստանի պես հետամնաց մի յեր-  
կրում սոցիալիստական հեղափոխություն հարուցել,  
և այլն :

Սոցիալ-դեմոկրատական այդ բարբաջանքներն  
ընկ . Տրոցկին դուրս ե տալիս տարին կամ 6—8 ամիսը  
մի անգամ . և ահա նույն այդ բարբաջանքները , սոցիալ-  
դեմոկրատական այդ իդեաների շիլափիլավն ընկ . Տրոց-  
կին հրամցնում է մեր կուսակցությանը՝ վորովես նո-  
րագույն հայտնությունը տրոցկիզմի , վորը կոչված է  
փրկելու տերմիդորիանականության մեջ ընկղմած պը-  
րոլետարական աշխարհը :

Մենք սկսուք ե ցավոք սրտի արձանադրենք , վոր  
այնպիսի հին բայլշեվիկներ , ինչպես Կամենյեվը , Զի-  
նովյեվը և ուրիշներն են , նույնպես խճճվել են արոց-  
կիզմի այդ թակարդի մեջ , բոլորովին չհասկանալով ,  
վոր , ըստ եյության նրանց մոտ վոչինչ չեմ մնացել հար-  
ցի լենինյան ըմբռնումից :

Յեվ յեթե մեր կենտրոնական կոմիտեն վատահ  
կերպով պաշտպանում ե այժմ իր դիրքերը , այդ ս-  
նում ե նա այն խոր համոզումով , վոր մենք գյուղա-  
ցիության նկատմամբ ճիշտ քաղաքականություն բա-  
նեցնելով , վերջին մեկ և կես տարվա մեջ կարողացանք  
փոխել դասակարգերի փոխհարաբերությունը մեր  
յերկրում—բայց վոչ թե այն ուղղությամբ , ինչպես ո-  
ղողիցիան ե կարծում , այլ հոգուտ սլրուետարական  
դիկտատուրայի : Յեթե 14-րդ կոնֆերենցիայի և 14-րդ  
համագումարի որերին համարյա բոլոր դյուդերից լու-  
րեր եյին գալիս , թե գյուղացիությունը մեզ հակառակ  
է տրամադրվում (ընկ . Զինովյեվն այն ժամանակ պատ-

րաստ եր շատ հեռու նահանջել, նա պատրաստ եր անկուսակցական գյուղացիների ֆրակցիա ստեղծել և այլն), ապա այժմ արդեն մեր կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն, լենինյան ուղիղ գիծ բոնած լինելով գյուղացիության հանդեպ, հոկայական հաղթանակ տարան այդ ֆրոնտում՝ ամրացնելով բանվոր դասակարգի ու գյուղացիության բլոկը, ամրացնելով մեր յերկրում ոլրոլետարական դիկտատուրան. նրանք դրանով իսկ կարեվորագույն յերաշխիք տվեցին, վոր խմապերիալիստները մեզ վրա հարձակվելու դեպքում հաղթանակը մերն ե: Վորովհետեւ կատարյալ անհեթեթություն կլիներ մտածել, թե կարելի յե ԽՍՀՄ-ի բիչ թե շատ հաղթական կերովով ոլաշտպանել իմապերիալիստական պետություններից՝ առանց բանվորաց գյուղացիական բլոկն ամրացնելու: Այդուն, բանվորաց-գյուղացիական բլոկը վո՞չ թե որոցկիստարար, ըստ ոպոզիցիայի, այլ լենինարար ըմբռնելով, մեր կենտրոնը, մեր կուսակցությունը և ԽՍՀՄ-ի կառավարությունը խոչորագույն հաջողություններ են ձեռք բերել վերջին մեկ և կեսից մինչև յերկու տարում և դրանով իսկ լենինարար նախապատրաստվել են մեր յերկրի պաշտպանության համար:

Ոպոզիցիայի հայտարարությունից գուք գիտեք, թե նա ինչպես յետ նահանջեց Տերմիլորի հարցում: Ոպոզիցիան միացյալ ոլենումում յեկավ կե-ի վրա հարձակում գործելու, մեղադրելու մեր կուսակցության կե-ը, թե վերջինս տերմիլորիանական կուրու և բռնել: Սակայն պլենումում, Տերմիլորի շուրջը բռնկած դիսկուսիայից հետո, ոպոզիցիան իրեն ջարդված, իդեյորեն ջախջախված դրաց: Պլենումի հարգածների

տակ, ոպողիցիան հրաժարվեց Տերմիդորի հարցն այդ  
տեսակ ըմբռնելուց, ընդունելով, վոր Տերմիդորը գո-  
յություն ունի, սակայն վոչ թե մեր կուսակցության  
կեռում, այլ յերկրի մեջ:

Դուք շատ լավ եք հասկանում, թե ի՞նչ նշանակու-  
թյուն ունի տեսակետի այդ փոփոխումը: Յեթե ասենք,  
թե տերմիդորիանականությունը կենտկոմումն է, այդ  
նշանակում է, վոր վերասերյալականները կենտկոմումն  
են: Իսկ յեթե ասենք, վոր յերկրում Տերմիդորի տար-  
րեր կան, նշանակում է յերկրում զոյտթյուն ունեն հա-  
կահեղափոխական տարրեր: Հարկավ, հակահեղափոխա-  
կան ուժեր կան մեր յերկրում, դասակարգերը մեզա-  
նում չեն վերացված, մեզանում կա բուրժուազիա, կա  
նոր բուրժուազիա, գոյություն ունի կուլտակություն,  
կան բուրժուական ինտելիգենցիայի տարրեր, վորոնք  
մեզ թշնամաբար են տրամադրված, և այլն:

Հրաժարվել այն թեզից, թե Տերմիդորը կԿ-ի մեջ  
և նստած և ընդունել, թե տերմիդորիանակությունը  
յերկրի մեջ է գտնվում—դա բավականին մեծ նահանջ  
և ոպողիցիայի կողմից:

Սակայն ոպողիցիան իր Փորմուլայի մեջ մի յելա-  
կետ և թողել, վորը նրա համար պահեստի զենք է ծա-  
ռայելու կուսակցության վրա նորանոր հարձակում-  
ներ գործելու համար: Այդ յելակետն այն մեղաղրանքն  
է, թե ԿԿ-ը բավականաշափ դիմադրություն չի ցույց  
տալիս մեր յերկրի տերմիդորիանական տարրերին:

Այդպես նահանջեց ոպողիցիան և' Տերմիդորի հար-  
ցում, և' ԽՍՀՄ-ի պաշտպանության հարցում, և' «կլե-  
մանսիզմի» հարցում: Ոպողիցիան կԿ-ի ոլենումում  
բացված դիսկուսիայից հետո, հարկադրված իր ուղ-

ղակի ասել, վոր նա անպայման կողմնակից և մեր սույնալիստական հայրենիքի պաշտպանության :

Նա ասաց, թե անպայման կողմնակից և ԽՍՀՄ-ի պաշտպանության, բայց բավականաչափ վճռականությամբ չտարրոշվեց Տրոցկու «կլեմանսիստական» թեզից, վորովհետեւ նա չեր ուզում բոլորովին դավաճանել իր լիդերին՝ Տրոցկուն :

Այդ բոլոր հարցերում կատարելապես և անվերառահորեն նահանջելով, ոպողիցիան հրաժարված կլինի արոցկիզմի սկզբունքներից :

Այդ հրաժարման և կոչում կուսակցությունը բոլոր ոպողիցիոներներին :

## ԱՊՈԶԻՑԻԱՅԻ ԲԼՈԿԸ ԿՈՄԻՏԵՐՆԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ ՀԵՏ

Այժմ, ընկերներ, յես անցնում եմ այն հարցերին, վորոնք վերաբերում են մեր յերկրի պաշտպանության կոմունիստական ինտերնացիոնալի գործունեյության, ապա և ոպողիցիայի կողմից գրանց վերաբերյալ առաջարկություններին :

Ներկա զեկուցման մեջ յես կանգ չեմ տոնի մեր յեղայրական կուսակցությունների գրության վերտերյալ հարցերի վրա, վորովհետեւ այդ խնդիրները բավականին սպառիչ կերպով լուսաբանվում են մեր պարբերական մամուլում։ Սակայն յես անհրաժեշտ եմ համարում ծանրանալ այն հարցերի վրա, թե ի՞նչորեւ վերաբերվում ոպողիցիան կոմինտերնի քաղաքականության, ինչպես և վերաբերվում կոմինտերնից գրասարքագործական իսմրականերին։

Դուք, ընկերներ, գիտեք, վոր ԿԿ-ն սպողիցիային, ուրիշ հարցերի հետ միասին, առաջադրել են նաև Ռուս Ֆիշերի ու Մասլովի խմբակից Հրաժարվելու հարցը: Բուտ Ֆիշերի խմբակից հարցն իր պատմությունն ունի: Մի քանի տարի սրանից առաջ Հրազդարակված եր գերմանական կոմկուսի մի նամակը, վորով հիմնավորվում եր Ռուտ Ֆիշերի և Մասլովի հեռացումը գերմանական կոմկուսի ղեկավարությունից, հեռացում, վորին համամիտ եր այն ժամանակ նաև ընկ. Զինովյեվը: Ինչպես Եյխնը բնորոշել մենք, ընկ. Զինովյեվի հետ միասին, այդ խմբակը, վորն ակնհայտորեն հեռանում էր կոմինտերնից:

Ամեն վոք կարող եր կարգալ կոմինտերնի 4-րդ ուշընումի բանաձեռվը, այն ոլենումի, վորն աշխատում եր ընկ. Զինովյեվի անմիջական ղեկավարության ներքո: Այդ բանաձեռվի մեջ ուղղակի ասված ե, թե Ռուտ Ֆիշերի և Մասլովի խմբակը ԽՍՀՄ-ի քաղաքականության հակաբայլշեվիկյան գնահատություն ե տալիս, կոմինտերնի քաղաքականությանը՝ հակաբայլշեվիկյան, հակալենինյան գնահատություն ե տալիս, ո՞նդեւսվ, թե կոմինտերնը դեպի «աջ» ե դնում:

Ահա՝ թե վորտեղից սկսվեց: Դրանից հետո, այդ խմբակն ավելի ու ավելի յեր հեռանում կոմունիզմից: Ընկ. Զինովյեվը համաձայն եր, վոր այդ խմբակը հակաբայլշեվիկյան, հակալենինյան քաղաքականություն ե վարում: Բուտ Ֆիշերին և Մասլովին վտարեցին կուսակցությունից: Այդ ժամանակ վաստորեն ողառոկառում առաջացավ դերմանական կոմկուսի շարքերում՝ «ույլտրա-ճախերը» իրենց համար ջոկ կուսակցություն կազմակերուցին և սկսեցին «Die Fahne d. Kommunismus»

(«Կոմունիզմի դրոշը») անունով հակակոմունիստական թերթ հրատարակել։ Հենց այդ «Կոմունիզմի դրոշն» և վոր այժմ մեր ոպողիցիայի կենտրոնական որգանն է դարձել։

84-ի ոպողիցիոն դրությունն այժմ արդեն լույս է տեսնում այդ հակահեղափոխական թերթուկի մեջ։ Զկա վո՛չ մի քիչ թե շատ նշանակալից ձառ՝ արտասահմած մեր ոպողիցիայի «Ուլտրա-ձախ» լիդերների կողմից, վոր շհրապարակվել այդ հրատարակչության կողմից։ Խմբագրությունը դրանք բոլորը տպագրում են և դեռ եժանացրած զնով ել վաճառում։ «Ուլտրա-ձախերը» ներկայումս զինովյակական, տրացկիստական մի կուսակցություն են ներկայացնում, վորը դիրեկտիվներ ե ստանում մեր ոպողիցիայից և վերջնիս կողմից ել զեկավարվում։

Ճիշտ ե «Կոմունիզմի դրոշ»-ում Զինովյեվի ու Տրոցկու հոգվածներն ու ձառերը չեն, վոր տպագրվում են, այլև նույն Ֆիշերի և Մասլովի թիած սեպհական դորձերը։ Այդ վերջին տեսակի գրվածքներում ուղղակի հայտարարվում են, թե մեզանում կառավարում ե Ստալինյան Փրակցիան, և վոչ թե կուսակցությունը, թե Կենտկոմը տերմիուրիանական մի կազմակերպություն է, թե Ստալինը—Նոսկին և այսինքն՝ բանվորների դահիճը ե այլն։ Մի ժամանակ նրանց բոհոծ վճռական կուրսն եր, վորքան կարելի յե շատ ցեխ շպրտել ԽՍՀՄ-ի վրա։ Վերջին ժամանակները նրանք մի քիչ փոխել են իրենց տակարիկան՝ նրանք ուղղակի ԽՍՀՄ-ի վրա ցեխ չեն նետում, վորովհետեւ բանվորները կշգացնեն, կիսայտառակեն նրանց բայց դրա վոխարեն նրանք առում են, մենք ոլեմք ե մեր կյանքը զահենք ԽՍՀՄ-ի

համար, սակայն կոմունիստական կուսակցությունը դոնվում է նրանց Նոսկեների, Շեյլեմանների ղեկավարության ներքո և այլն: Բայց չե՞ վոր մեր կուսակցությունն անբաժանելի յե ԽՍՀՄ-ից և քանի վոր բանվորական մի ժողովում հաշիվ չկա ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու, ուստի հարվածներն ուղղվում են կուսակցության դեմ:

Տեսե՛ք, թե ինչպե՞ս եյին բնորոշում մեր կուսակցությունը «ուլտրա-ձախ» հակահեղափոխականներն անցյալ տարվա վերջերին:

«Փաստորեն բայլշեվիկեներն ունեվոր դասակարգերի գործադիր կոմիտեն են ներկայացնում. նրանք կառավարիչներն են ունեվոր դասակարգերի, վորոնք կապիտալիզմ մացվելու շնորհիվ, առանց արյունհեղության ձեռք դցեցին իշխանությունը»:

Դեռ վերջերս եր՝ հուլիսին, վոր Ռուտ Ֆիշեր Մասլովի որգանը հետեւվյալ կերպ եր բնորոշում մեր կուսակցական ղեկավարության քաղաքականությունը.

«ԽՍՀՄ-ի արդի ղեկավարների վողջ քաղաքականությունը հակահեղափոխությունն է սնուցանում: Հակահեղափոխությունը լիդար ուղիղվ և սնվում»:

ԽՍՀՄ-ի պակա՞ս «պաշտպաններն» են նրանք:

Ուղղիցիան, հոկտեմբերի 16-ի իր հայտարարության մեջ զրել եր, թե նա հանդիսավոր կերպով պարտավորվում է չպաշտպանել կուսակցությունից վտարված այդ խմբակին՝ վո՞չ ուղղակի, վո՞չ ել անուղղակի կերպով:

Այժմ նա իր այդ խոսումը «կատարեց» այնովիսի

մի ձեվով, վոր այդ հակահեղափոխական կռւսակցության կենտրոնական որդանն իր կենտրոնական որդանն է դարձնում:

Մյուս կողմից՝ սպովիցիան պաշտպանում և ֆրանսիայում առաջացած Սուվարին-Մոնտանումեր աջ խմբավորումը:

Վերջինս «Կոմունիստ» անունով մի բյուլետեն և մի թերթուկ է հրատարակում, վորը «Պրոլետարական հեղափոխություն» անունն է կրում: Սուվարինի հրատարակած այդ բյուլետենի վերջին համարներից մեկում ասված է, թե ԽՍՀՄ այլևս բանվորական պետություն չէ, թե մեղանում միմիայն սոցիալիստական տենդենցներ են մնացել, թե մեր կռւսակցությունը կուրային դիմ է բռնել և այլն:

Ֆրանսիական աջերը, ընդհանուր առմամբ նույնին են ասում, ինչ վոր գերմանական «ույլուրա-ձտիսերը»:

Ավելորդ շի լինի նշել, թե Սուվարինի որդանի ստացած նյութական աջակցությունը – բուրժուական ոլբյուրներից և բղիում, վոր վաստացի հաստայած է:

Դուքս և դալիս, վոր սպովիցիան կառեր և հաստառում, զոդվում է Կոմինտերնից վտարված այն հակահեղափոխական տարրերի հետ, վորոնք պայքար են մզում Գերմանիայի և ֆրանսիայի կոմունստների դեմ: Դուքս և դալիս, վոր սպովիցիան սղտաղործում է հակահեղափոխական մի կռւսակցության որդանը՝ մեր կռւսակցության և Կոմինտերնի վրա հարձակումներ գործելու համար:

Դուք հիմնում եք ընկերներ, վոր սպովիցիայի լիւերները հոկտեմբերի 16-ի հայտարարությունը, հան-

գիսավոր կերպով խոստացել եյին՝ սահմանադժվել Կոմիտերնից վտարված խմբակից։ Սակայն նրանք գործնականում վոչ միայն չսահմանադժվեցին այդ խմբակից, այլ գեռ սերտագույն կտակեր հաստատեցին նրանց հետ՝ թե՛ իդեական, թե՛ կազմակերպչական։ Այժմ նրանք հարկադրված եյին այդ հարցում յետ նահանջել նրանք հայտարարեցին, թե կազմակերպչորեն վտարվածների այդ խմբակներից սահմանորոշվում էն, սակայն ընդդեցին, թե այդ անում են ակամայից, յենթարկվելով հրամանին, թե պետք է վտարվածներին յետ ընդունել Կոմիտերնի շարքերի մեջ և այլն։ Կարելի յերավարար համարել ոպողիցիայի հայտարարության այդ մասը։ Վո՛չ մի գեղագում։ Մենք չպետք են մոռանանք, վոր ոպողիցիան այստեղ ևս կուսակցության դեմ «քար ե պահել իր ծոցում»։

## ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆ ՅԵՎ.

### ՈՊՈՉԻՑԻՈՆ ԲԼՈԿ

Հիմա յես ուզում եմ կանգ առնել չինական հեղափոխության մի քանի պրոբլեմների վրա։ Ինձ թվում ե, թե մեր և ոպողիցիայի միջեվ տիրող գլխավոր տարրերությունը—վոր պարտավոր է հասկանալ մեր կուսակցության ամեն մի անդամ—հետեւյալն ե։

Զինական հեղափոխության ասպարիզում չեր կարելի գործել նիշտ այնպիս ինչպիս գործում եյին բայց շեվիկները 1905 թվին։ Յեթե այս հարցը ըմբռնենք իր վողջ խորությամբ, այն ժամանակ դյուրին կերպով կհամոզվենք, թե վորքան ճիշտ ե յեղել մեր տակտիկան չինական հեղափոխության նկատմամբ (թեև մտսնակի

սխալներ պատահել են) և վորքան սխալ և յեղել մեր ոպողիցիայի «գիծը», վորի համաձայն չինական հեղափոխության մեջ պետք եր կիրառել նույն այն տակտիկան, վոր մենք գործադրել եյինք 1905 թվականի հեղափոխության մեջ:

Նախ և առաջ յես ուզում եմ հետեւյալ հարցը զնել: Առաջին հայացքից թվում ե, թե ոպողիցիայի արգումինդացիան (պատճառաբանությունը) ըստ յերեվութին, վորոշ չափով համոզիչ է: Կե-ի և կոմինտերնի վարած քաղաքականության ներքո, չինական հեղափոխությունը, համենայն դեպո, ժամանակավոր պարտություն է կրել: Իսկ յերբ մարդիկ, կազմակերպությունները, դասակարգերը պարտություն են կրում, հակամայից հարց և ծագում, թե կիրառված տակտիկան, քաղաքականությունը չե՞ր արդյոք այդ պարտության պատճառը: Հենց ինքը, պարտության փառք, վորոշ հակում և ստեղծում վերագնահատելու այն տակտիկան, վորը գործադրված է յեղել:

Բացի այդ, կարող ե, ո՛ո, այնպիսի տպավորություն ստացվել, թե ոպողիցիայի դատողությունը չսփազանց ուղիկալ բնույթ է կրում, վոր նա, կարծես, բայլշեվիկորեն է դատում: Ոպողիցիան ասում է. ի՞նչ կարիք կար ինամիություն հաստատել ինչ վոր բուժուազիայի հետ: Հարկավոր եր «կուտ դասակարգութին», «պրոլետարական» գիծ բոնել, պետք եր հենց «կղբից խորհուրդներ ստեղծել, ինչպես մեղանում, և վոչ թե բարեկամություն հաստատել գոմինդանի, ամեն տեսակ գեներալների հետ, ինչպես Զան-Կայ-Շին և նմաններն են. մենշեվիկական տակտիկա վարելով, պետք չեր բուժուազիայի հետ բլոկ հաստատել, վորը

ողարտության հասցըեց : Պետք եր բացահայտ շիտակ  
դասակարգային գիծ բոնել, առանց բուրժուազիայի  
հետ բլոկ կազմելու—այդ գեղքում ամեն ինչ լով կլի-  
ներ :

Այս խոսքերն, ընկերներ, չափազանց ուաղիկալ են  
հնչում և նույնիսկ համոզիչ են թվում այնպիսի մարդ-  
կանց համար, վորոնք չեն առաջադրել չինական հե-  
ղափոխության առանձնահատկությունների հարցը,  
վորոնք չեն կարդացել լենինի գրածները գաղութային  
յերկրների ազգային հեղափոխության առանձնահատ-  
կությունների մասին : Յես պիտի կրկնեմ այն, ինչ վոր  
ասել եմ ԿԿ-ի պլենումում իմ տված զեկուցման մեջ.  
Չինաստանում տեղի ունեցած անցքերն առաջին անգամ  
առաջադրեցին կիսադադութային յերկրի հեղափոխու-  
թյան պրոբլեմը՝ իր ամբողջ ծավալով : Մինչեվ այժմ  
մենք լուծում եյինք այլ և այլ հեղափոխությունների-  
հետ կապված տակտիկական պրոբլեմները՝ գերմանա-  
կան, ավստրիական, Հունգարական և վերջապես, մեր  
հեղափոխության հետ կապված տակտիկական պրոբ-  
լեմները : Պետք է ասեմ, վոր մենք, հարկավ, ընդհա-  
նուր ձեվով քննում եյինք նաև արեվելյան հեղափոխու-  
թյան պրոբլեմները, սակայն վո՞չ ամբողջ կոնկրետու-  
թյամբ, չեյինք վորոշել, թե ի՞նչպես պետք է կատարել  
այդ հեղափոխությունը, ի՞նչ պայմաններում և ի՞նչ-  
ուիսի լոգունողներով :

Նախ և առաջ քննենք ոպողիցիայի առաջադրած  
ուխավոր արգումենտը : Ամենքին ել հայտնի յե, թե  
ինչպես եր ըմբոնում լենինը թուսաստանի բուրժուա-  
կան գեմոկրատիկական հեղափոխության հարցը : Ի՞նչ-  
պես եյին դատում մենչեվիկները մեր հեղափոխության

մասին։ Նրանք ասում եյին՝ այդ հեղափոխությունը  
բուրժուական հեղափոխություն է։ Նա ուղղված է  
ֆեոդալ ուժիմի, ցարական ինքնակալության դեմ։  
Քանի վոր դա բուրժուական հեղափոխություն է, տպա-  
ուրեմն բուրժուազիան պետք է, վոր հեղափոխական  
ուժ հանդիսանա, ուստի բանվոր դասակարգը պետք է  
աջակցի այդ բուրժուազիային, բանվոր դասակարգը  
պետք է համաձայնության դա, բլոկ կազմի լիբերա-  
բուրժուազայի հետ։ Այդ եր պատճառը, վոր մենշևիկ-  
ները ընտրությունների ժամանակ ձեռք եյին բռնուա-  
կադետներին, բլոկ եյին կազմել նրանց հետ, «պատաս-  
խանառու մինիստրության» լոգունդն եյին բաց թողի։

Ի՞նչ եյին ասում բայց եվիկները և ի՞նչպես եր դը-  
նում հարցը Լենինը։ Ընկեր Լենինն ասում եր. մեր  
յերկը հեղափոխությունը բուրժուական է, այդ ճիշ-  
ե. սակայն բանվոր դասակարգը դյուղացիության հետ  
դաշն կնքած՝ պետք է այդ հեղափոխությունը բուր-  
ժուազիայի ուն ուղղի, վորովհետև մեր յերկըում, շր-  
նորհիվ դարձացման ուրույն պատմական պայմանների.  
վորով հասլաղել ե բուրժուական հեղափոխությունը.  
բանվոր դասակարգը հանդես է գալիս վորպես ինքնու-  
րույն մի ուժ, մեր լիբերալ բուրժուազիան անխուսա-  
փելիորեն կղավաճանի հեղափոխության հենց սկզբից.  
այդ իսկ պատճառով պրոլետարական կուսակցության  
ինդիրը վո'չ թե լիբերալ բուրժուազիայի հետ բլոկ  
կադետներին է, այլ նրան մերկացնել, վո'չ թե աջակցել լի-  
բերալ բուրժուազիային, այլ ուղղակի կոիվ մղել նրա-  
դեմ։

Մենշևիկների բռնած գծին՝ պրոլետարիատի ու  
լիբերալների բլոկին—բայց եվիկները 4տկաղըցին

բանվոր դասակարգի և գյուղացիության բլոկը՝ ուղղված ցարիզմի և հակահեղափոխական լիբերալ բուժապիտայի դեմ։ Յեվ ահա, ընկ. Տրոցկին ու ոպոզիցիան 1905 թ. բայլշեվիկական այդ տակտիկան փոխարում են չինական հեղափոխության վրա և ասում են. «Զե՞ վոր բայլշեվիկներն ուսուցանում եյին, թե անհրաժեշտ է կռիվ մղել լիբերալ բուժուազիայի դեմ։ իսկ ձեր արածն ի՞նչ ե, դուք բլոկ եյիք կազմել լիբերալ բուժուազիայի հետ։ Աւստի, բայլշեվիկները վերջ ի վերջո հաղթող հանդիսացան ոռւսական հեղափոխության մեջ, իսկ դուք ձեռից բաց թողիք պատեհությունը և անհաջողության հանդիպեցիք, դավաճաններ սընուցիք, վորոնք լքեցին չինական հեղափոխությունը, վորովհետեւ դուք մենշևիկական դիծ եյիք տանում»։

Այս ե, ահավասիկ, ընկ. ընկ. Տրոցկու, Զինովյելի և մի շարք այլ ոպոզիցիոն ընկերների գլուխավոր արդումենտը։ Այս արգումենտացիան, կրկնում եմ, արտաքուստ բոլոր տվյալներն ունի համոզիչ թվալու եիր այդ համոզիչ յերեվույթով նա կարող է վոմանց շահել։ Բայց բանն այն ե, վոր չինական հեղափոխության վերաբերմամբ սխալ ե, լենինյան մեթոդ չե՝ կետ առկետ գործադրել այն տակտիկան, վորը կիրառել եյին բայլշեվիկները 1905 թ. հեղափոխության ժամանակ։

Ընկ. Զինովյեվը առարկելով ինձ, ասում ե, թե Բուխարինը Զինաստանի համար անընդունելի յե՝ համարում լենինյան ուսմունքը դեմոկրատիկ հեղափոխության մասին։ Նա այդտեղ առնվազն մի փոքր աղավաղում ե իրողությունը, վորովհետեւ լենինը, ինքը գողութային յերկրների բուժուազիան հեղափոխության համար տակտիկական վորոշ դիծ ե տվել մեղ, վորը և

տանում ենք : Այդ գծի մասին ե , վոր յես պետք ե խո-  
սեմ այժմ : Կոմինտերնի դեռ յերկրորդ կոնդրեսոս  
հարց բարձրացավ զաղութային յերկրների մասին :  
Դաղութային հարցին վերաբերյալ թեզերի մասին ընկ .  
Լենինը հետեւյալն եր ասում :

«Վո՞րն ե մեր թեզերի ամենագլխավոր , հիմ-  
նական իդեան .

Ճնշված և ճնշող ժողովուրդների միջեվ յեղած  
տարբերությունը , մենք այդ տարբերությունն  
ընդգծում ենք , հակառակ Յերկրորդ ինտերնացիո-  
նալին և բուրժուական դեմոկրատիային : Պրոլե-  
տարիատի և կոմունիստական ինտերնացիոնալի  
համար առանձնապես կարեվոր և խմալերիալիզմի  
դարաշրջանում վորոշել տնտեսական կոնկրետ-  
իաստերը և , զաղութային ու ազգային բոլոր հար-  
ցերը լուծելիս , յելակետ ունենալ վոչ թե արքա-  
տրակտ (վերացական) մի զրություն , այլ կոն-  
կրետ իրականության յերեվույթները» :

Այդպես ուրեմն , ընկ . Լենինն առաջնակարգ կարե-  
վորություն եր տալիս խմալերիալիստական և զաղու-  
թային յերկրների տարբերության : Յեթե խմալերիա-  
լիստական և զաղութային յերկրների տարբերությունն  
առաջնակարգ կարեվորություն ունի , ապա պետք է ,  
վոր այդ որյեկտիվ տարբերությունն այսպես թե այն-  
պես անդրադառնա նաև տակտիկայի վրա . Հարցն այն  
է , թե ինչպես և ի՞նչ ձեվերով :

Ի՞նչպես եր ձեվակերպել ընկ . Լենինը տակտիկա-  
կան այդ տարբերությունը : Յես մի հետագարձ հայացք  
կձգեմ հեռավոր անցյալի վրա , յերբ մեղանից շատերը ,  
նրանց թվում ե յես , սիսալ մոտեցում ունեյինք աղքա-

յին հարցին և ընկ . Լենինը պարզաբանում էր մեր որ-  
խալը : Զեզ մի դեպք հիշեցնեմ , վորի մասին հիշատա-  
կել եյի արդեն կկ-ի ոլենումի նիստում :

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ , բրի-  
տանական կառավարության կողքին՝ իրլանդիայում  
խոռվություն սկսվեց : Դուք հիշում եք , վոր այն ժա-  
մանակ իրլանդական մեծ ազստամբություն ծագեց .  
Վորը հետագայում արյունով խեղղեցին անդլիացիք :  
Այդ ազստամբության զեկավարը (իրլանդիան Մեծ  
Բրիտանիայի կողմից ձնչված մի յերկիր ե) վո՞չ թե  
ոլրուետարիատն եր , այլ իրլանդական ուսդիկալ բուր-  
ժուազիան , վորին գլխավորել եր հայտնի Դե-Վալե-  
րան : Դա ոլրուետարական ազստամբություն չեր , թե՛  
րանվորներն աջակցում եյին նրան , այլ ձնչված ազգի  
ազստամբություն եր իմպերիալիստների , անդլիական  
իմպերիալիզմի զեմ :

Ի՞նչ վերաբերմունք ցույց տվին այդ փաստին կո-  
մունիստների այլ և այլ խմբավորումները :

Ռազեկը մի հոդված գրեց , թե իրլանդական ոլրու-  
տամբությունը մի «պուտչ» է , ոտ ոլրուետարական  
զործ չե , թե այդ գործը մեզ չի վերաբերում , թե նրան  
ոլարտություն է վիճակված , թե այդ հեղափոխություն  
մեջ արտադասակարգային զիծ է տիրում , նրան զեկա-  
վարողը ուսդիկալ բուրժուազիան է և այլն :

Ի՞նչ եր զրում ընկ . Լենինն այլ տեսակետի դեմ :

Նա ասում էր , թե այդպես գրելով , մենք աջակ-  
ցում ենք անդլիական իմպերիալիզմին՝ ընդդեմ ձնչված  
մի ազգի ազստամբության , վորը թեպետ և ոլրուետա-  
րական մի ոլայքար չե , սակայն՝ կործանում է իմպե-  
րիալիստական ոիստեմը : Նա պնդում էր , վոր իրլան-

դական ապստամբությանն այլպիսի վերաբերմունք ցույց տալն անգլիական շովինիստներին ողնել են նշանակում : Նա ասում էր, թե Մարքոսի և Ենդելսի տրադիցիաներին հետեւվող պրոլետարական մի կուսակցություն պարտավոր էր աջակցել այդ ապստամբության, վորովհետեւ դա ճնշված ազգի ապստամբություն էր ճնշող ազգի դեմ :

Իսկ յեթե մենք, դառնալով չինական գործերին, հարց տանք, թե վո՞րն ե իմպերիալիստական և գալութային յերկրի ամենակարևոր տարբերությունը, պետք ե ոլատասխանենք . այդ տարբերությունը հետեւյալն է . չնորհիվ նրան, վոր դա իմպերիալիստական յերկիր չե , այլ գաղութային—դասակարգերի խմբավորումն այդ յերկրում հեղափոխության վորոշ շրջանում չի կարող նման լինել դասակարգերի այն խմբավորման, վոր գոյություն ունի իմպերիալիստական յերկրում :

Խոսենք ավելի սլարգ և կոնկրետ ձևով : Մեզանում լիբերալ բուրժուազիան մի վոքր տրտնջում էր ցարական ռեժիմի դեմ, սակայն նա անընդունակ էր այդ ռեժիմի դեմ վճռական քայլեր գործելու : Մեր կաղետների կուսակցությունը յե՞րբ և զենքը ձեռքին վոտի կանգնել ցարիզմի դեմ : Յերբեքը : Մեր լիբերալ բուրժուազիան յե՞րբ և վճռական բողոք՝ բարձրացրել ցարական ռեժիմի դեմ : Յերբեքը : Այնպիսի մի մասսայական յելութն իսկ, ինչպես 1905 թ. հոկտեմբերյան դործադուլն էր, միանգամից յետ վանեց լիբերալ բուրժուազիան : Նույնիսկ այլպիսի մի յելութ յերկյուղ ազդեց նրան :

Հիմա վերցնենք այն սլայմանները, վորոնց մեջ ընթացել ե չինական հեղափոխությունը, աչքի առաջ

ունեցեք վոչ միայն այն, ինչ վոր ներկայումս ե կատարվում, այլև այն, ինչ կատարվում եր 1911 թվականին։ Վերհիշեցեք այն, ինչ վոր կատարվում եր Զինաստանի կայսերական իշխանության տապալումից հետո, Սուն-Յաթ-Սենի հիմնած առաջին Հանրապետության որերից սկսած։

Վերհիշեցեք զարգացման հաջորդ աստիճանը՝ սուածին կանտոնյան կառավարության շրջանը։ Վերհիշեցեք հյուսիսային արշավանքի շրջանը։ Յես հարց եմ տալիս։ Պասակարգային հարաբերությունների ոբյեկտիվ վերլուծումից պետք ե յելնենք, թե՞ վոչ։ Ճի՞շտ է, թե՞ վոչ, վոր չինական բուրժուազիան գուրս եր յեկել իմպերիալիստների դեմ, վորոշ շրջանում ոգնելով դործադուլային շարժումին, զենք բարձրացնելով ֆեռագանների դեմ, իմպերիալիստների դեմ։ Յես պնդում եմ, վոր չինական հեղափոխությունը զարգացման այդպիսի շրջան ունեցել է։ Դա փաստ ե։ Կանտոնի կառավարությունը «բանվորա-դյուլացիական» չեր, ինչպես Ռադեկն եր գրում, նա «բանվորների բարեկամը» չեր, ինչպես Ռադեկն եր գրում։

Մի՞թե իրողություն չե, վոր բանվորների դահիճ Զանկայ-Շին հյուսիսային արշավանքն առաջին հերթին չինական ֆեռագանների, մասամբ ել այդ ֆեռագաններին ձեռք բռնող իմպերիալիստների դեմ ուղղեց։ 1911 թվականից սկսած, Զինաստանի հեղափոխությունն այնպիսի փուլեր ե ունեցել, յերբ չինական բուրժուազիան, զենքը ձեռին կոիվ մղելով, ակտիվ հեղափոխական դեր ե կատարել, վորովհետեւ բանակը բուրժուազիան հրամանատարության ներքո յեր գլուխովում։ Յեպ այն Զանկայ-Շին, վոր հյուսիսային ար-

չովանքն եր զործում, բուրժուազիայի շահերի արտահայտիչն եր և վոչ թե աշխատավորների, բանվորների ու գյուղացիների։ Այդ բուրժուազիան կարող եր մի քանի տարի շարունակ հեղափոխական դեր խաղալ, ապա նա բանվորների ու գյուղացիների դահիճը դառնավ ու սկսեց հակահեղափոխական դեր կատարել։

Տարբերություն կա՞ Զինաստանի այդ հեղափոխական բուրժուազիայի և մեր կաղետների միջև։ Անշուշտ։

Հիմա հարց ե ծագում։ Ի՞նչն եր այդ տարբերության պատճառը։ Դրա պատճառը հենց այն եր, վորմեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը տեղի յեր ունենում իմպերիալիստական ձըստումներ ունեցող թուսաստանում, իսկ Զինաստանի բուրժուական դեմոկրատական հեղափոխությունը կիսագաղութային մի յերկրում եր կատարվում։ Յեվ չինական բուրժուազիան չափազանց շահագրգուված ե իմպերիալիստական լուծը դեն գցելու։ Շատ բնական է, վոր հարկավոր եր մասսաներին շատ ավելի շարժել և վախեցնել այդ բուրժուազիային— քան մեր յերկրի կաղետական բուրժուազիային, —վորպեսզի նա հարկադրված լինի հակահեղափոխության բանակն անցնելու։

Հենց դրանով ել հնարավորություն եր ստեղծվում, վոր չինական բուրժուազիան մի շարք տարիների ընթացքում ակտիվ հեղափոխական դեր խաղա և ապա միայն հակահեղափոխական մի ուժ դառնա։ Կարող են առարկել, թե ոկտոք ե նախառեսնեխնք այդ դավաճանությունը։ Վերհիշենք մի որինակ ռուսական հեղափոխության պատմությունից։ Եներները յեր-

ևիցե հեղափոխական դեր խաղացել են : Խաղացել են : Կարելի՞ յեր նրանք հետ բլոկ կազմել : Կարելի յեր : 1905—6—7թ. թ. մենք եսերների հետ բլոկ կազմեցինք : Եսկ յեթե կոմունիստներից մեկը հիմա - առաջարկեր եսերների հետ բլոկ կազմել, ինչ կասեյինք մենք : Մեզ հաժար կարեռն այն է, վոր Զինաստանում, հենց այն պատճառով, վոր դա գաղութային մի յերկիր է, մի շարք տարիների ընթացքում կարող եր որյեկտիվորեն հեղափոխական դեր կատարել : Ուստի ընկ . Լենինն ինքը, գաղութային յերկրների բուրժուազիայի հանդեպ մեր ունենալիք վերաբերմունքը հակադրելով այն վերաբերմունքին, վոր պետք է ունենանք դեպի բուրժուազիան՝ 1905թ. հեղափոխության ժամանակ, հետեւյալն է գրում .

«Կոմունիստական ինտերնացիոնալը ոլետք ե ժամանակոր համաձայնություն, նույնիսկ դաշինք կնիքի գաղութների և ենտամբնաց յերկրների բուրժուական դեմոկրատիայի հետ, քայց չպետք է միաձուլվի նրա հետ, այլ անպայման պահպանի պրոլետարական շարժման սովորականությունը՝ քեկուգ սաղմային ձևերով» :

Լենինը նույնիսկ ձևակերպել է այն պայմանները, թե յե՞րբ կարելի յե համաձայնություններ ու դաշինք կնիքել : Նա նշգրիտ կերպով ասել է, թե յե՞րբ և ի՞նչ պայմաններում կարելի յե համաձայնություն կնիքել բուրժուական ազատագրական շարժման հետ :

Նո գրում եր .

«Մենք, վորպես կոմունիստներ, այն դեպքում միայն պետք է աջակցենք գաղութային յերկրների բուրժուական-ազատագրական շարժումներին,

յերբ այդ շարժումներն իսկապես հեղափոխական շարժումներ են» :

Յեվ ապա պարզաբանեց, թե ի՞նչ և նշանակում այդ .

«Յերբ նրանց ներկայացուցիչները խոչընդու չեն հանդիսանա մեզ՝ գյուղացիությունը և շահագործվողների լայնագույն մասսաներին հեղափոխականորնն կազմակերպելու» :

Դիսկուսիայի ժամանակ՝ ընկ . Զինովյեվն ինձ տում եր, թե բուրժուական դեմոկրատիա ասելով, այստեղ գյուղացիությունն ե հասկացվում և թե այդ ե գործի եյությունը : Դա դատարկ բան ե, վորովհետեւ այս ցիտատից, վորտեղ խոսվում ե համաձայնության ոլայմանների մասին, հետեւում ե, վոր մենք, կոմոնիստներս, այն դեպքում պետք ե աջակցություն ցույց տանք գաղութային յերկրների բուրժուական-ազատագրական շարժումներին, յերբ բուրժուազիայի ներկայացուցիչներն արդեւք չեն հանդիսանա դաստիարակելու ողբոլետարիատին և գյուղացիությանը :

Հետեւապես, մենք դաստիարակում ենք գյուղացիությանը, իսկ բուրժուական-ազատազրական շարժումը կարող է կամ արդելել մեզ գյուղացիությունը հեղափոխական վոգով դաստիարակելու, կամ ընդհակառակը, թույլ տալ : Վերջին դեպքում մենք պետք ենք հանց հետ դաշն կնքենք և պարտավոր ենք կնքել :

Մի՛թե սա այն տակտիկան ե, վոր առաջարկում եր լենինը կայսերական Ռուսաստանի համար : Իհարկե, վոչ :

Ոպողիցիոն հերոսներից մեկը՝ ձեզ հայտնի Ստֆարովն ազգային հարցին նվիրված իր մի գրքույկում

դրել ե , թե «այն տատանումները , վորոնք զոյություն  
ունեն գաղութային և կիսազաղութային յերկրների աղ-  
դային բուրժուազիային աջակցություն ցույց տալու  
հարցում , ինքնակալական շովինիզմ և ցույց տալիս» :  
Այժմ արդեն նա մոռացության ե տվել իր գրածը , սա-  
կայն փաստ ե , վոր Սաֆարովի գրքույկի մեջ բառացի  
այդպես ե գրված : Առաջին հայացքից թվում ե , թե  
սպողիցիայի պլատֆորմը չափազանց ուաղիկալ մի պր-  
յատֆորմ ե . բայց իրոք , չնայած դրա արմատականու-  
թյան , սոցիալ-դեմոկրատական թեքում ունի , վորով-  
հետեւ սոցիալ-դեմոկրատներն այսպես եյին դատում :  
«Դուք նացիոնալիստական շարժման հետեւից եք ընկել ,  
մինչդեռ դա զուտ պլուետարական շարժում չե գաղու-  
թային յերկրներում» ե այլն : Իսկ մեզ կոմունիստներին  
համար կարենորն այն ե , վոր մենք անպայման ոգտա-  
դործենք իմպերիալիզմի դեմ ուղղված այդ շարժումը .  
մենք շահագրգոված ենք այդ շարժմամբ նույնիսկ այն  
դեպքում , յերբ նա իր դարդացման առաջին շրջանում  
վո՞չ պլուետարական տարրերի կողմից ե զեկավարվում ,  
ձիչտ այնպես , ինչպես մենք շահագրգոված եյինք այն  
շարժմամբ , յերբ իրլանդական բուրժուազիան , անգլի-  
ական իմպերիալիզմի դեմ յեղնելով , իր յետեւից տա-  
նում եր իրլանդական բանվորներին ու դյուզացիներին :  
Մենք շահագրգոված ենք այդ շարժումներով այն պատ-  
ճառով , վոր դրանիք քայլայում են իմպերիալիստական  
մեքենան , վորովհետեւ դրանիք ոբյեկտիվորեն նպաստում  
են ժողովրդական հեղափոխության ուժերի ծավալման :

Յեթե թեկուզ ինքը , սատանան դուրս դար իմպե-  
րիալիստական կուռքի դեմ , մենք նրան եւ պետք է  
շնորհակալություն հայտնեյինք (ծիծաղ) : Կյանքը ,

սակայն, ավելի բարդ է քան սովորական թեորիան։ Յեզ  
չինական հեղափոխության պրոբլեմի ամբողջ բարդու-  
թյունը հենց այն է, վոր սկզբում չինական բուրժուազ-  
իան ժողովրդին տանում եր իմպերիալիստների և ֆե-  
ողալների ղեմ։ Նա նպաստում եր ժողովրդական ուժերի  
ծավալման, նա ողնեց ժողովրդին՝ ինքնուրույնության  
ասպարեզ դուրս գալու, դրանով և արդարանում մեր  
այն տակտիկան, վորին հետեւելով՝ մենք համաձայնու-  
թյուն եյինք կնքել բուրժուազիայի հետ՝ հեղափոխու-  
կան շարժումի զարգացման վորոշ շրջանում։ Ինչո՞վ  
արտահայտվեց այդ համաձայնությունը։ Վերջին տա-  
րիներում այդ համաձայնությունն արտահայտվեց նր-  
անով, վոր կոմունիստական կուսակցությունն աջակ-  
ցություն եր ցույց տալիս Զանկայ-Շիի հյուսիսային  
արշավանքին, վոր Կանառնից մինչև Շանհայ ընթա-  
ցավ։ Յեզ մենք շահեցինք այդ աջակցությունից։ Մեր  
շահն այն եր, վոր քանի կանտոնյան բանակը, կանոո-  
նից առաջ շարժվելով, Շանհային եր մոտենում, լիբե-  
րալ բուրժուազիան թույլ եր տուիս, վոր մենք մաս-  
սաներին հեղափոխականորեն կազմակերպենք։ այնպես,  
վոր կանտոնյան բանակի առաջինադամանը զուգահեռա-  
ւար, չտեսնված չափով աճում եյին հեղափոխական  
ուժերը և մասսայական շարժումը։ Հենց այդ ժամանա-  
կաշրջանումն եր, վոր հոկայական ծավալ ստացան բան-  
վորական միությունները, հենց այդ շրջանումն եր, վոր  
ասրածվեց զյուղացիական շարժումը, վոր 10 միլիոնից  
ավելի մարդ ներգրավեց։ Մենք, վորպես պրոլետար-  
իատի մի կուսակցություն, աջակցություն եյինք ցույց  
տալիս կանտոնական բանակին՝ ընդդեմ ֆեոդալների և  
իմպերիալիստների։

Նույն այդ ժամանակները բուրժուազիան արգելք չեր լինում, վոր մենք բանվորներին ու գյուղացիներին հեղափոխական վոգով դաստիարակենք, ուստի այդ արշավանքի ամբողջ ընթացքում կազմակերպչական աշխատանք եր կատարվում, վորը վստահություն ներշնչեց դեպի կոմունիստները: Այդ մեր ամենագլխավոր հաջողությունն է: Յերբ ներկայումս մենք խոսում ենք շինական հեղափոխության կրած պարտության մասին, ողետք ե խոսողանենք, վոր դա խոչոր պարտություն է:

Սակայն չպետք է մռանանք, վոր մենք հաղթանակներ ել ենք ունեցել: Խմբերիալիստները չամրացրին իրենց դիրքը Զինաստանում, չնայած, վոր Զան-Կայ-Շին սկսեց բանվորներին գնդակահարել. յերկրորդ՝ մենք վոտի կանգնեցրինք ժողովրդական հոկայական մասսաներին, վորոնց մենք չեյինք կարող չարժման մեջ դնել, յեթե աջակցած չլինեյինք հյուսային արշավանքին, յեթե մենք կնքած չլինեյինք ժամանակավոր այն համաձայնությունը, վորի մտախ խոսում եր Լենինը:

Մի ըսպե յենթաղրենք, վոր Զան-Կայ-Շին սկսած լիներ այդ հյուսիսային արշավանքը, դորքերը կանոնից դիմելիս լինեյին դեպի հյուսիս, իսկ մենք առլուտամբություն կազմակերպեյինք կանոնային այդ դորքեր դեմ, համաձայնություն կնքած չլինեյինք ազգային բուրժուազիայի հետ, բացարձակ պատերազմ հայտարարած լինեյինք նրան, վո՞չ մի բլոկ կազմած չլինեյինք նրա հետ:

Ոգտակար կլինե՞ր մեզ համար այդ ամենը: Անտարակույս, ոգտակար չեր լինի: Մեզ համար անհրաժեշտ եր կրկին անդամ թափ տալ մեր թեերը, ոջակցություն

ցույց տալով կանոռնյան բանակին : Առանց դրա՝ մենք չենք ունենա ժողովրդական հսկայական մասսաների մեջ անհրաժեշտ վերելքը :

Դա այն տակտիկան է , վորը մատնանշել է ընկ . Լենինը : Բայց յերբ այդպես արագորեն թափ առած այդ ուժերն սկսեցին յերկյուղ աղղել այն բուրժուազիային , վորը մեր դաշնակիցն եր , յերբ ակնհայտ դարձավ , վոր այդ բուրժուազիան հենց վաղը կսկսի մեր թշնամիների կողմը վաղել , մենք պետք ե , վոր պայքարի նոր պայմաններ սպառաստելինք նախապես , նոր կամուրջ ստեղծելինք , նախապատրաստելինք ժողովրդին այդ վերահաս դավաճանության , մերկացնելինք դավաճաններին :

Այդպես ել արինք :

Յավալիորեն , այդ ժամանակները մեր ոռւստկան թերթերում ավելի ֆիչ եյինք գրում դրա մասին , քան անում : Դավաճանությանը մենք սպառասխանեցինք մեր լոգունդները փոխելով :

Այդպես ուրեմն , յես համախմբում եմ այն ամենը , ինչ վոր վերաբերում է այստեղ արծածված մեր ընդհանուր տեսակետին :

Այս հարցի մեջ կարող ե յերեք դիմ լինել . ա) Բոլոր դեսպերում ել համաձայնություն բուրժուազիայի հետ , բ) Ռազմիցիայի դիմը՝ վո'չ մի դեսպերում համաձայնության չգալ լիբերալ բուրժուազիայի հետ , գ) Իսկական , միակ ուղիղ լենինյան դիմն այն ե , վոր վորոշ ետապներում պետք ե աջակցություն ցույց տալ բուրժուազիան ազատազրական շարժումին , քանի նա իրոք հեղափոխական մի շարժում ե :

Այդ շարժումը հեղափոխական ե այն սպառասոսվ .

վոր մեզ հնարավորություն ե տալիս՝ դաստիարակելու  
մասսաներին—բանվորների ու գյուղացիների մասսա-  
ներին—դաստիարակելու իսկական հեղափոխական վո-  
դով։

Յեվ յեթե դուք այդ տեսակետից մոտենաք չինական  
հեղափոխության ընթացքին, կհամոզվեք, վոր մենք  
լենինարար ենք վարվել։

Մենք համաձայնության ենք յեկել լիբերալ բուր-  
ժուազիայի՝ նույնիսկ Զան-Կայ-Շիի հետ, քանի դեռ  
այդ խմբակը հնարավորություն եր տալիս մեզ՝ պատ-  
տիարակելու չինական կոմունիստական կուսակցու-  
թյունը, դաստիարակելու Զինաստանի ժողովրդական  
մասսաներին այնպիսի վորով, վորն անհրաժեշտ եր  
մեղ համար։

Զպետք ե մոռանալ, ընկերներ, վոր մենք ժամա-  
նակին փոխեցինք մեր վերաբերմունքը, յերբ պարզը-  
վեց, վոր լիբերալ բուրժուազիան հակառակ կողմն է  
անցնում։

Հարկավ, շատ դժվար ե հենց սլարտության մո-  
մենտին հաստատել, թե մեր տակտիկան ուղիղ ե յեղեւ։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր՝ յերբ մենք—  
չնայած, վոր բայլշեիկյան տակտիկան միանդամայն  
անսխալ եր՝ 1905 թ. ջարդ կրեցինք Պրեսնայի բարրե-  
կադների տակ, կամ յերբ սլարտություն կրեցինք 1917  
թ. հուլիսյան որերին՝ նույնպես ավելի դժվար եր ա-  
պացուցել, թե բայլշեիկների տակտիկան ճիշտ ե։

Զինաստանում տեղի՝ ունեցած անցքերի մա-  
սին միայն հաս ու կտոր տեղեկություններ  
կան թերթերում։ Զեզ հայտնի յե, վոր յերբ  
Ուխանի կառավարությունը հակահեղափոխության

բանակն անցավ, գոմինդանի մեջ վորոշ չերտավորում առաջացավ՝ վերնախավերից և ավելի շատ ստորին խավերից առանձնացան ձախ գոմինդանականները։ Հաղիվ թե դուք լսած լինելիք նրանց բոլորի անունները, սակայն նրանց մեջ ե, որինակ Սուն-Յաթ-Սենի կինը, և ազգային հեղափոխության մի շարք խոշոր գործիչները, նրանց մեջ կան նաև կոմունիստներ։ Յեվ ահա դրանք ապստամբության դրոշը բարձրացրին Ուխանի կառավարության դեմ, ինչպես ձեզ հայտնի յէ լրագրերից։ Յես կարող եմ ասել, վոր նրանց հաջողվեց 20,000 սվինից բազկացած մի բանակ կազմակերպել։ Նրանք դրավեցին Նանչանը։ Նրանք մտադիր են դուրս գալ Նանչանից, վորը շրջապատված ե թշնամական ուժերով և պիտի դիմել Գուանդուն՝ հյուսիսից դեպի հարավ, ճանապարհին իրենց չուրջը համախմբելով գյուղացիներին ու բանվորներին։ Նրանք իսկական հեղափոխական, մարտական մի բոռնցք են կազմում։ Նրանք իրենց կարմիր բանակ անվանելով, հաջողությամբ առաջ են ընթանում դեպի հարավ։ Նրանք հաջողության վորոշ շանսեր ունեն։ Կազմակերպել են արդեն մի նոր կառավարություն, վորն իրոք բանվորների ու գյուղացիների բլոկն է հանդիսանում, վորովհետեւ այդ նոր կառավարությունը բացահայտ կերպով իր դրոշի վրա դրել ե՝ «Հողերի բռնագրավում», «շամփրենք սվինով կարգածառերին» ինչպես հարկն ե» և այլն։

Նա, այդ նոր կառավարությունը, առհասարակ տնօքադրավարի յէ վարդում գյուղի և քաղաքի ականավոր, տիրապետող տարրերի հետ։

Հուրեյում ել վերջերս մի խմբավորում է առաջացել։ Նա զգալի չափով ավելի վորը և, սակայն նույն

բնույթը ունի : Նրանց շուրջը համախմբվում են գյուղացիական մասսաները , բանվորները , պարտիզանները և այլն :

Հարկավ վատ դրություն կստեղծվի , յեթե նրանց ջարդեն , սակայն , միթե՝ ակներեւ չե , վոր նրանց առաջ գալը մեր ազգեցության հետեանքն է :

Շանսեր կան , վոր այդ նորակազմ բանակային կորիզից հետագայում իսկական կարմիր բանակ դուրս կդա : Յես անձնապես այն կարծիքին եմ , վոր այդ խիզախ փորձը , հաջողությամբ պսակվելու դեպքում , ավելի լավ կհաստատի մեր տակտիկայի ճշտությունը , քան մեր պարտություն կրած ժամանակ :

Չինական հեղափոխության մեջ կիրառած մեր տակտիկան ստուգելով , պետք է խոստովանել , վոր այս կամ այն մասնակի սխալն ունեցել ենք , սակայն պետք է խղճմառեն ասեմ , վոր Կոմինտերնի և Համ Կկ (բ) Կկ-ի տակտիկական գիծն ընդհանուր առմամբ միակ ուղիղ գիծն է յեղել : Իմ կարծիքով , այդ չի նշանակում , թե մենք պարտավոր ենք չինական տակտիկան ամբողջովին փոխադրել գաղութային այլ յերկրներ : Կոմինտերնում մենք քննում ենք Հնդկաստանի հարցը : Իրերի դրությունն այնտեղ այլ է , քան Չինաստանում՝ չնայած , վոր գաղութային մի յերկիր է : Այդ տարբերության պատճառն այն է , վոր Հնդկաստանի բուրժուազիան ավելի սերտ կապեր ունի անգլիական իմպերիալիստների հետ , ուստի հազիվ թե նա իրականում դուրս գա անգլիական իմպերիալիզմի դեմ : Չի կարելի Չինաստանի փորձը մեքենայաբար Հնդկաստանում կիրառել : Սակայն , դառնալով Չինաստանին , հարցն ուշիմությամբ քննելիս , կտեսնելք , վոր միակ ուղիղ տեսա

կետն այն տեսակետն եր , վորը պաշտպանում եյին մեր  
կուսակցությունը և Կոմինտերնը :

Յես ուզում եմ չոշափել չինական խորհուրդների  
հարցը ևս :

Չինական հեղափոխության հիմնական առանձնա-  
հատկություններից մեկն ե յեղել մինչև այժմ այն-  
պիսի մի կազմակերպության գոյությունը , ինչպես  
Գոմինդանն ե , վորի մեջ պառակտում ընկավ Չանկայ-  
Շիի դավաճանությամբ : Գոմինդանը մասսայական մի  
կազմակերպություն ե , վորն իր միջից ընտրում եր կա-  
ռավարության անդամներին : Ուխանական շրջանում  
ձախ Գոմինդանի նշանակած կառավարությանը մենք ա-  
ջակցություն եյինք ցույց տալիս , քանի դեռ նա հա-  
կահեղափոխական չեր դառել , քանի դեռ այդ կառավա-  
րությունը թույլ եր տալիս մեզ՝ չինական Կոմկուսին  
աշխատանք տանել չին բանվորների և գյուղացիների  
միջև : Յեթե մենք այդ ժամանակ սկսեյինք խորհուրդ-  
ներ ստեղծել , դրանով մենք ուխանական կառավարու-  
թյունը տապալելու կուրս բռնած կլինեյինք , տապա-  
լելու այն կառավարությունը , վորին մենք պարտավոր-  
վել եյինք աջակցություն ցույց տալ և վորը պետք է  
ուղաշտպանեյինք :

Այժմ արդեն , յերբ այդ կառավարությունը հակա-  
հեղափոխության բանակն անցավ , մենք վերջին փորձն  
արինք ամբողջապես տիրանալու գոմինդանական ստո-  
րին խավերին և դատապարտելու Գամինդանի Վան-  
Տին-Վեյական վերնախավը : Մենք պարտավոր եյինք  
այդպիսի մի դիրեկտիվ տալու , վորովհետեւ Գոմինդանի  
հետ կապված մասսայական բոլոր կազմակերպություն-  
ների մեջ՝ գյուղացիական միություններում , Կոմիտե-

ներում, բանվորական պլոֆմիություններում, մենք դերակցիու ազգեցություն ունենք: Այդ բոլոր կազմակերպություններն եւ կասլված են Գոմինդանի հետ և մենք պարտավոր ենինք վոտի հանել Գոմինդանի ձախ ստորին խավերը նրա վերնախավերի դեմ: Յեվ ինձ թրվում ե, թե դա ե միակ ուղիղ տակտիկան: Մյուս կողմից, վերջին ժամանակները մենք պետք ե հետեւյալ հեռանկարը նախատեսնեյինք: Թերեւս մեր հակառակորդը, վորի ձեռին ուղմական ուժն ե կենտրոնացած, Գոմինդանի ամբողջ գծով այնպիսի մի արշավանք կսկսի և Գոմինդանն այնպիսի մի կազմակերպություն կդարձնի, վոր մենք այլեւս վո'չ մի կերպ չենք կարողանա ոզտագործել նրան: Գոմինդանը գավառական կազմակերպություններ ունի, վորոնց գլուխը կանգնած են կոմունիտները, կամ նրանց մոտ անձնավորություններ: Հակահեղափոխականներն այդ կազմակերպությունները ցըռում են, նրանց անդամներին կախաղան են բարձրացնում և նոր կոմիտեներ են նշանակվում: Դա Գոմինդանի «վերակազմություն» ե կոչվում: Հետեւապես, շատ բնական ե, վոր յերբ ուղմական ուժը մեր ձեռքին չե, յերբ ուղմական այդ ուժը մեր դեմ ե դործում, մենք ժամանակ չենք ունենա Գոմինդանի մասսաներին վոտքի հանելու, վորպեսզի նրանք տապալեն վերնախավերը: Այժմ յերբ Գոմինդանն ամեն կողմից ճեղքեր է տալիս, մեր վերջին վորձը պետք ե լինի վոտքի հանել Գոմինդանի ստորին խավերը վերնախավերի դեմ:

Ներկայումս Գոմինդանի բոլոր լավագույն տարրերը խորհուրդների ուղիով կընթանան, վորովհետեւ Գոմինդանի կազմակերպությունը քայլայվում է ճեղքեր և տալիս, վորովհետեւ հավանական է, վոր մենք

ժամանակ չենք ունենա Գոմինդանի ստորին խավերին վերնախավի դեմ հանելու :

Ահա թե ինչու մենք նոր լոգունդ ընդունեցինք՝ խորհուրդները քարողելու լոգունդը։ Յեվ յեթե հեղափոխության վերելքը զարդանա, անհրաժեշտ է այդ լոգունդի պրոպագանդից անցնել խորհուրդների անմիջական կազմակերպման, առաջադրելով այդ նոր լոգունդը, վորովես բացարձակ քաղաքական ուժայքարի այժմեյան մի լոգունդ։

Այսպես պետք է հասկանալ վերջին ժամանակները մեր առաջադրությունները։

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՅԵՎ ՌՊՇՁԻՑԻԱՆ

Ի վերջո, յես ուզում եմ ձեր ուշագրությունը հրավիրել այն խնդրի վրա, թե ի՞նչ վերաբերմունք է ցույց տվել ոպողիցիան կազմակերպչական կուսակցական հարցին՝ իր յելույթների ընթացքում։

Նախ յես կուզեյի ձեզ հիշեցնել, վոր մեր կուսակցության XIV-րդ համագումարից հետո մենք բոլորս եւ ոլնդում եյինք, թե «նոր ոպողիցիան» կազմակերպչական հարցում ըստ եյության անցել է Տրոցկու պլատֆորմը, առաջադրելով Փրակցիաների և խմբավորումների աղասության լոգունդը, Տրոցկու «ապրիր և թույլ տուր, վոր ուրիշներն եւ ապրեն» լոգունդը, վորը ժամանակի ընթացքում փոխվեց—Ռոսվոկու—յերկու կուսակցությունների լոգունդին։

Հետադարձ հայացք դցելով անցյալի վրա, տեսնում ենք, վոր ոպողիցիայի կողմից այն ժամանակները կուսակցության դեմ ուղղված ամեն մի նկատողություն հասուն պառաղներ եւ տվել այժմ։ Այդ պառաղ-

ները, վոր բոլորս ել տեսնում ենք, քաղեց «Հին», պատմական Տրոցկին։ Թե ինչպես ե ըմբռնում Տրոցկին կազմակերպչական-կուսակցական սկզբունքները, շատ ցայտուն կերպով արտահայտված ե 1904 թ. նրա «Մեր քաղաքական խնդիրները» բրոշյուրում։

Յես ձեզ պետք է հիշեցնեմ 1904 թվականի Տրոցկու դատողությունները, վորպեսզի կարողանամ հաստատել այն պատմական հաջորդականությունը, վոր գոյություն ունի ոպոզիցիայի արդի հայացքների և այդ հին տրոցկիստական—մենշևիկական հայացքների միջև։ Տեսք, որինակ ի՞նչ ե գրում Տրոցկին կուսակցական բայց շեիկյան ոեժիմի մասին Լենինի դեմ։

«Կոմիտեյի յերեք կամ հինգ անդամ ներկայացնում են հասարակական բանվորական կազմակերպության միություններ ու կամքը»։ Նրանք են, վոր վորոշումներ են հանում, կուսակցության մեջ «նոր ուղղություններ մտցնում», նրանք վերցնում են «եկոնոմիզմը», նրանք գործադրության են կանչում «ցենտրալիզմը», ընդունում են Ասքր «անչեն ճանաչում այդ Ասքրա ն մի խոսքով՝ նրանք են, վոր սահմանում են ներկուսակցական-ամբողջ քաղաքականությունը. իսկ նրանցից ներքեւ՝ «մանր աշխատանք տանողներ»։ Վորոնք թուուցիկներ են շարում, փող են հավաքում, բրոշյուրներ են տարածում . . .

Ներկուսակցական բանավեճերի վերջին 3—4 տարվա ընթացքում կոմիտեներից շատերի կյանքը պետական մի շարք հեղաշրջումների պատկեր ունի՝ նըման սլալատական այն հեղաշրջումների, վորոնք կատարվել են XIXIII-րդ դարում։

Այնուեղ, վերեվում, շատ և շատ հեռու բարձունքներում մի վոմն մեկին ծուղակն է զցում, պաշտոնից հանում, իսկդում է, մի վոմն իրեն այս ինչ է հայտարում— և այդ բոլորից հետո՝ կոմիտեյական բարձունքներում հանդիսավոր գրոշակ է բարձրանում «որթողիկսիա», ցենտրալիզմ, քաղաքական կոիվ մակադրությամբ . . .» :

Միթե կուսակցական ուժիմի ըմբռնումն ոպոզիցիան չի փոխ առել Տրոցկու «Մեր քաղաքական ինդիրները» բրոցյուրից : Միթե այն, ինչ վոր Տրոցկին ուղղել էր Լենինի դեմ, ներկայումս ոպոզիցիան չի ուղղում ԿԿ-ի և ամբողջ կուսակցության դեմ :

Միթե «պատմական» Տրոցկին այդպիսով իր պրաղները չի քաղել .

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս եր հասկանում Տրոցկին առաջ և ինչպե՞ս է հասկանում ներկայումս կուսակցական դիսցիպլինան .

«. . . Դիսցիպլինան—գրում և Տրոցկին—միուր ունի այն դեպքում միայն, յերբ նա հնարավորություն է տալիս պայքար մղել այն բանի համար, վորը մարդ ուղիղ է համարում և վորի համար յենթարկվում է այդ դիսցիպլինային : Բայց՝ յերբ վորոշ ուղղությունը սպառնում է «իրավունքներից զբեկվելու» հեռանկարը, այսինքն՝ գաղափարական աղղեցություն գործելու հնարավորությունից զրկվելու հեռանկարը, այն ժամանակ նրա գոյության իրավունքի հարցը գառնում է ուժի հարց» :

«Այդ վերջին դեպքում—շարունակում է Տրոցկին—կրամոլ (խոռվարար) ուղղության ներկայացուցիչները, նայած թե վորչափ սուր բնույթ ու-

նեն պայմանները—կամ պառակտում են ստեղծում  
կուսակցության շարժերում, գերադասելով ունաւ  
դիսցիպլին պահպանել իրենց սկզբունքների նը-  
լատմամբ՝ քան յենթարկվել ձևական դիսցիպլինի  
«սկզբունքներին», և կամ մնում են կուսակցության  
մեջ, աշխատելով իրենց ազդեցությամբ, վորքան  
կարելի յեն նվազեցնել կուսակցական դիսցիպլինի  
սահմանափակումները, վորակեսղի այդպիսով կարո-  
ղանան մաքսիմալ չափով ազատություն առահս-  
պել՝ գործելու և վնասակար տենգենցներին հակա-  
դործելու համար: Քանի նրանք գիտակցորեն կա-  
զատագրեն իրենց կուսակցական պարտադիր դիս-  
ցիպլինի սանձից՝ հանուն կուսակցական շահերի  
(ըստ իրենց ըմբռնումի) և քանի իրենց ազդեցու-  
թյան ուժը հնարավորություն կտա այդ անելու,  
ապա խղճուկ սնոտիապաշտություն կհանդիսանան  
հակառակ կողմի բոլոր զանիքերը՝ յետ պահելու նո-  
րանց՝ «դիսցիպլին» խոսքի գորությամբ: Վոչինչ  
այնին վողորմելի տպավորություն չի գործում,  
վորքան այն ժաղաքական «առաջնորդի» կերպա-  
րանիքը, վորը վճռական բոպեյին այդպիսի միջոցի  
յե դիմում: Այդ բանը չպետք է մոռանալ յերբեք»:  
Տրոցկին դիսցիպլինն ընդունում է այնչափ,  
վորչափ դա «Ճնշում չի գործում» նրա «անձնավորու-  
թյան» վրա, նրա համար կարեռ է միայն նրա անձնա-  
կան կարծիքը, անձամբ իր սահմանած նորմաները:  
Կուսակցական վորոշումները, հանրակուսակցական  
նորմաներ, կուսակցական կամք, վորոնց պարտավոր է  
յենթարկվել ամեն մի կուսակցական, նրա համար գոյու-  
թյուն չունեն:

Յերբ կուսակցության կարծիքը տարբերվում է նրա անձնական կարծիքից, նա «պառակտում է առաջացնում» կուսակցության շարքերում. նա «խղճուկ սնուտիապաշտություն» է անվանում «դիսցիպլին» խոսքի ուժով նրան այդ վարժունքից «յետ պահելու բոլոր չափերը» :

Կուսակցության կամքը բանի տեղ չդնող ոպոզիցիան՝ Տրոցկու նույն այս նախառվյալներից չե՞նում արդյոք: Այն ինչ Լենինը բացառիկ խստությամբ է բնորոշել ուրոցկիզմի տեսակետը՝ կազմակերպչական հարցում:

Նա հետևյալն է գրել այդ առթիվ.

«Կոմունիստական կուսակցությունը նրա համար իրեշավոր մի «Փաքրիկ» է, մասն ամբողջին! Փոքրամասնությունը մեծամասնության յենթարկվելը նա «ստրկացում» է համարում... Կենտրոնի ղեկավարության ներքո աշխատանքի բաժանումն առիթ է տալիս նրան տրագիկոմիկ վայնասուն բարձրացնելու, թե մարդկանց «պտուտակներ» և «անվիկներ» են դարձրել... Կուսակցության կազմակերպչական կանոնադրության մասին հիշատակելիս, նա արհամարհական գրիմասով նկատություն է անում, թե առանց կանոնադրության եւ կարելի յե յուա գնալ... Կուսակցական սոորին և բարձրագույն կոլեգիաների ու ինստանցիաների վո՛չ մի յերարխիա պետք չե— աղայական անարխիզմը տեսչությունների, դեպարտամենտների դրասենյակային մտացածին մի ստեղծագործություն է համարում այդպիսի յերարխիան... Ավելորդ է, վոր մասը յենթարկվի ամբողջին, կարեռ

չե, վոր Փոքրմալ բյուրոկրատիկ յեղանակով կուսակցական միջոցներ սահմանված լինեն համաձայնության գալու կամ տարորոշվելու համար, թող հին խմբակային բանակոխվները սրբագործվեն «կազմակերպության իսկական սոցիալ-դեմոկրատական ձևերի» վերաբերյալ ճոռոմաբանությամբ»:

Յեվ ահա տրոցկիզմից փոխառած «աղայական-անարխիստական» այդ իռելուոգիան ոպող ցիային տարագհացրեց մինչև Յարսլավլի կայարանը: Էնկ. Զինովյեվը բացե ի բաց ասաց, թե ընկ. Սմիգային ճանապարհ գցելը նրանց կողմից քաղաքական մի ցույց երկար-ի դեմ: Կե-ի դեմ, սեփական կուսակցության գեցուղղված փողոցային այդ քաղաքական ցույցը հանցագործ մարմնացումն եւ այն «աղայական-անարխիզմի», վորի ուղին վաղոց ե, վոր բոնել ե ընկ. Տրոցկին եւ ուր ցավալիորեն քարշ եւ տալիս նա իր հետեւից նոե Զինովյեվին, Կամենեևին եւ ուրիշներին:

Ինչպես հայտնի յե, ոպողիցիան այդ կետում նահանջեց, բայց նահանջելով, իր համար վո'չ թե դուռ, այլ մի մեծ դարպաս թողեց հետագա հարձակումների համար: Ոպողիցիան հայտարարեց, թե ինքը պատրաստ է վերջ տալու Փրակցիոնականության, բայց Փրակցիոնական տարրերը— տուռմ եւ ոպողիցիան— առաջ են դալիս կուսակցական ոեժիմի խեղաթյուրումներից: Դուրս եւ դալիս, վոր նրանք մեղավոր չեն, վոր Յորուղավլի կայարանն են դնացել, այլ մենք:

Այսպես ուրեմն, ընկերներ, յեթե մենք վորոշ յեղափակումներ անենք՝ կտեսնենք, վոր 14-րդ համարումարին հաջորդած ժամանակաշրջանում ոպողիցիո-

ներները, սկսելով տերմիուրիանականության մասին տկնարկներ անելուց, վերջի վերջո, հայտարարեցին, թէ ԿԿ-ը տերմիուրիանական վերասերման և մատնըվել. կազմակերպչական խնդրում խմբավորումների աղատություն պահանջելուց անցան Յարոսլավլի կայարանի ցույցին: Դրա արդյունքն այն յեղավ, վոր լայն բացվեց ներկուսակցական «մկրատը»:

Այսպիսի յեղբակացությունների առջե կանգնած կուսակցականի համար կարող ե անհասկանալի թվականի բանած դիրքի վորոշ կողմերը, ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը դիսկուսիայի ժամանակ հիմնովին ջախջախած լինելով իր ոպողիցիոն քաղաքական հակառակորդներին, նրանց իդեոլոգիկ փակուլու մեջ խցկած լինելով, այնուամենայնիվ բավականացավ նրանց համար հանդիմանության վորոշում հանելով և թողեց ոպողիցիայի լիդերներին ԿԿ-ի կազմի մեջ: Ի՞նչ նկատառումներով այդպիսի վորոշում կայացրեց ԿԿ-ի և ԿՎՀ-ի պլենումը:

Ոպողիցիան կուսակցության համար վտանգավոր է վոչ թե այն տեսակետից, վոր նա կարող ե քիչ թե շատ զգալի խավեր տանել իր հետեւից. յես անձամբ կարծում եմ, թե այդ չի կարող աեղի ունենալ, թեև ոպողիցիան պարծենում ե, թե նա մոտ յերկու հազար կողմնակից ունի կուսակցականներից:

Մենք ծանոթացել ենք ոպողիցիայի սոցիալական կազմի հետ, այն ոպողիցիայի, վորը հավակնությունունի մեզ կշտամբելու, թե մեր կուսակցության շարքերում բանվորները շատ քիչ տոկոս են կազմում: Ոպողիցիայի կազմին ծանոթանալուց հետո՝ մենք համոզվեցինք, վոր նրա մեջ բանվորների տոկոսը շատ ամենի

փոքր է, քան ամբողջ կուսակցության մեջ։ Հետեւապես ոպողիցիոներները հիմք չունեն խրոխտալու իրենց սուցիալական կազմով։

Դա հասկանալի յէ։ Նրանց բական վո՛չ թե բանվորական բջիջներն են կազմում, այլ բարձրագույն դուրոցների բջիջները, Վրաստանի շովինիստները և վերջապես տրոցկիստների այն բուն կադրը, վորք կուսակցության դեմ ուղղված պայքարի բոլոր ետապներում ել Տրոցկու հետեւից ե ռնացել։

Ոպողիցիան մեզ համար վտանգավոր է հանդիսանում հետեւյալ սկատմառով։ այդ Փրակցիան, վորք համեմատարար փոքր կազմ ունենալով հանդերձ՝ կարող է յերկրորդ կուսակցություն դառնալ նույն իսկ հակամայից, նա ոռւպոր կհանդիսանա յերկրում դոյլություն ունեցող այն ուժերի համար, վորոնք ուղղված են պրոլետարիատի, մեր կուսակցության տիրապետության դեմ։

Ոպողիցիան վտանգավոր է մեզ համար նրանով, վոր մեր կուսակցության դեմ ավելի սուր պայքար մըրդելու դեպքում, նա կուսակցությունից դուրս գցված ուժերի ոռւպորն է հանդիսանալու։ Դեռ ավելին. այդ դեպքում ոպողիցիան անխուսափելիորեն ոռւպոր և հանդիսանալու այն ուժերի համար, վորոնք պայքար են մղում մեր յերկրի Խորհրդային իշխանության դեմ։

Ահա թե ինչու մենչեւկները, վորպես պատասխան այն ցույցին, վոր սարքել եյին ընկ. ընկ. Զինովյեվը, Տրոցկին և ուրիշները՝ Սմիլգային ճանապարհ գցելիս, բացե ի բաց հայտարարեցին, թե այդ ցույցը «ամենաշանակալից իրադարձությունն ե», վոր տեղի յե ունեցել յերկրի քաղաքական կյանքի վերջին տարիներում»։

Բնականաբար մենք մեր կողմից պետք է ամեն հը-  
նարավոր միջոց դործադրենք, վորպեսզի յետ դարձը-  
նենք ոպողիցիային դեռի յերկրորդ կուսակցությունը  
անող կորսուարեր ուղուց, վորպեսզի յետ նվաճենք  
ոպողիցիայի շարքերում գտնված ամեն մի բանվորին,  
վորպեսզի մեր կողմը դարձնենք նրան :

Այդ հանդամանքը հաշվի առնելով՝ մենք մի վերջին  
քայլն ել արինք ոպողիցիայի հետ հաշտվելու նպատա-  
կով : Մենք նրանց հետ կովի դուրս յեկանք կենտ .  
Կոմիտեյում, իդեալեա ջախջախեցինք նրանց, նրանց  
ստիպեցինք կիսով չափ անձնատուր լինելու, թեպետ ե-  
նրանք բոլորովին անձնատուր չեղան, այլ միայն կիսով  
չափ, վորովհետև իրենց ծոցում քար թողեցին կուսակ-  
ցության վրա հարձակվելու համար : Զի կարելի յե-  
րաշխավոր լինել, վոր նրանք նույնիսկ այդ խոստումը  
կկատարեն և վո՞չ մի դեպքում չի կարելի թուլացնել  
կուսակցության զգաստությունը՝ ոպողիցիայի նկատ-  
մամը : Մենք յերկյուղ ենք կրում, վոր ոպողիցիան կա-  
րող ե ամեն մի հարմար առիթից ոգտվել, վորպեսզի կա-  
րողանա այսպես թե այնպես, խոտոր ճանապարհներով  
անցկացնել իր «գիծը» : Նա չի հրաժարվել այդ «գր-  
ծից», նա անձնատուր չի յեղել ամբողջովին, այլ միայն  
կիսով չափ :

Ոպողիցիայի լիդերներին մենք հայտարարեցինք  
վոր նրանցից շատ բան ե կախված, վոր Կե-ը բառիո-  
ւուն նշանակությամբ ամեն ինչ արավ միությունը  
ըլահպանելու համար : Մենք կարծում ենք, վոր ուղիղ  
վարվեցինք նաև ոպողիցիոն բանակի ամեն մի զինվո-  
րին նվաճելու տեսակետից : Ամբողջովին ոպողիցիայի  
վրա յե ընկնում պատասխանավությունը, յեթե կու-

սակցության շարքերում համալումարից տուած և հո-  
մագումարից հետո նոր բարզություններ տուածանան։  
Մեր պարտականությունը կլինի անշեղ կերպով պաշտ-  
ողանել մեր քաղաքական գիրքը, անշեղ կերպով կոխվ  
մղել լենինյան մեր քաղաքական գծի համար և կուռ  
ոլայքար մղել ոպողիցիայի բոլոր կազմալուծիչ վոտրն-  
ձղությունների գեմ։ Մենք կոչ ենք անում մեր կու-  
ռակցությանը, վոր վերջինս ե՛ւ ավելի միաձուլի իր  
շարքերը լենինյան հողի վրա։ Մենք չենք կարող ոպո-  
ղիցիային խոստանալ, վոր կհրաժարվենք այս հարցերը  
մշակման յենթարկելուց։ Ընդհակառակը, մենք պետք  
ե լայն ժողովրդականություն տանք այս ոլենումի ար-  
դյունքներին։

Մենք պետք ե ընդհանրապես վողջ կուսակցությա-  
նը և մասնավորապես ոպողիցիայի կողմնակիցներին  
ցույց տանք այն վտանգը, վոր սպառնում ե մեզ յերկ-  
րորդ կուսակցության հեռանկարը։ մենք պետք ե ցույց  
տանք թե ինչպես ոպողիցիան իդեալես և կազմակերու-  
չորեն վտանգավոր ուղի յե բոնել։ Մենք պետք ե ամ-  
բողջ կուսակցության ցույց տանք, ասենք, վոր նա ար-  
թուն և զգաստ պետք ե լինի։ —

Հեղափոխության մեծ նվաճումները մենք կարող  
ենք ամրացնել և բազմացնել վերահսած ծանր ժամանա-  
կաշրջանում միայն մի ոլայմանով՝ ե՛ւ ավելի խոց-  
նելով կուսակցական շարքերը։ Մենք պետք ե հասկա-  
նանք, վոր մեր կուսակցության կազմակերպչության  
միությունը մեր հաղթանակի ահհրաժեշտ ոլայմանն  
է. այդ պետք ե բացուրենք մենք և՛ մեր կուսակցու-  
թյանը, և՛ Կոմինտերնի բոլոր անդամներին, և՛ միջազ-  
դային բանվոր դաստկարդի լայն շրջաններին։ Մենք

ովեաք և հասկացնենք, վոր անկարելի յէ մորիլիզացիո-  
յի յենթարկել յելբողական, տոխական, աֆրիկան ուր-  
բուլետորիտատի բանվորական լայն մասսաներին ԽՍՀՄ-ի  
պաշտողանության համար զանազան առաջարկելներ պատ-  
մելով նրանց՝ ինչ վոր տերմիգորների, վերասերումի,  
աւարյալովական թեքումի, նացիոնալ ռեֆորմիզմի  
մասին :

Մեր Միության կուսակցության բոլոր անդամներն  
եւ թշնամու պետք և յելնեն միասնական ֆրոնտով՝  
վոչ միայն կազմակերպչական, այլ և խղեուողիական  
իմաստով, վորովհետեւ մեր շարքերի կայունությունը,  
նրանց ուժն այն պետքում միայն ապահովված կլինի,  
յեթե մենք կատարելապես համոզված ենք, վոր սոցիա-  
լիզմ ենք կառուցում և վոչ թե պետկապիտակով, վոր  
մեր պետությունը բանվորական պետություն է, և վոչ  
թե կիսատերմիդորիանական մի վիժվածք :

Մենք չենք կարող հաղթանակել այն համոզմուն-  
քով՝ թե մեր յերկրում «քաղաքական աղջամուգ» է  
ուիրում :

Մենք կարող ենք հաղթանակել մի լոկոնդով՝

Կեցցե՛ սոցիալիզմի անող ուժը մեր յերկրում  
(բուռն ծտփահարություններ) :



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0063460

~~ԳԻՒՆ Տ 12 ԿՈԴ.~~

[2n-]

